


# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԻՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարական դասընթաց



Պ. Ա Ղ ա ռ օ ա ղ ա ճ

Տպարան Մ. Աթուոյ Ս. Էջմիածնի

1910

372

Ք-28



0120-

372  
28  
W

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

31997



ՏԱՐՐԱԿԱՆ ԳՍՍԸՆԹՍՅՔ



Վ ա դ ա ր ց օ ա ւ աս

Տպարան Մ. Արտույ Ս. Էջմիածնի

1910

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՎԵՐԿՆԵՐԻ ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

**Տ. Տ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի Բ.**

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ե Ն Ս Ր Բ Ա Զ Ն Ա Գ Ո Յ Ն Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի  
Ա Մ Ե Ն Ա Ց Ն Հ Ա Ց Ո Ց



I. Կ Ր Օ Ն

Ա. ՏԱՐԻ. (շաբաթական 2 դաս)

Կրօնաբարոյախօսութիւն

Աղօթք: Խաչակնքել. Տէրունական աղօթք (աշխարհաբար): (Ուսումնական տարուայ սկզբում գրուցատրութեան եղանակով արծարծուած են տէրունական աղօթքի մէջ պարունակուած մտքերը և ապա ակնարկուած նիւթը):

Նոր ուխտից: Յիսուսի երկրաւոր կեանքի համառօտ ու անփոփ նկարագրութիւն: Ծընունդ. Տաճարին ընծայումը. Մկրտութիւն. Ոսնալուայ. Խաչելութիւն. Թաղում. Յարութիւն. Համբարձում:

Մանկական հէքիաթներ: (9—10 հատ) Բարոյախօսական առակներ և պատմուածքներ:

Բ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Հին ուխտից: Նահապետներ:

Արքայամ: Աստուած կանչում է Արքայամին. Արքայամը և Ղովաթը բաժանուած են. Արքայամն ազատում է Ղովաին. Իսահակի ծընունդը:

Յակոբ. Յակոբի փախուտը. Յակոբը Լաբանի մօտ. Յակոբի դարձը խառանից. Եսաւի և Յակոբի հաշտութիւնը. Յովսէփ. Յովսէփի եղբայրները և նրա վաճառումը. Յովսէփը Պետափրէսի տանը (առանց դայ-

թակղութեան պատմութեան). Յովսէփի բարձրանալը. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. Յովսէփը յայտնուում է եղբայրներին. Յակոբը Եգիպտոսում. Յակոբի մահը:

Նոր ուխտից.

Առակներ. Կոյսերի առակը. Անառակ սրբու առակը. Սերմնացանի առակը. Քանքարների առակը:

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս).

Հին ուխտից: Առաջնորդներ:

Մովսէս. Իսրայէլի նեղութիւնները Եգիպտոսում. Մովսէսի ծնունդն ու ազատութիւնը. Մովսէսի փախուստը. Աստուած կանչում է Մովսէսին. Եգիպտոսից դուրս գալը. Իսրայէլացիք անցնում են անապատով. Սինայի օրէնսդրութիւնը. Ոսկէ հորթ. Լքտեսներ. Մովսէսի մահը:

Յեսու. Յեսուն նուաճում է Քանանը. նրա մահը:

Պատարներ:

Գէղէոն. Գէղէոնի ընտրութիւնը և մահը:

Սամսոն. Սամսոն և նրա մահը:

Հեղի—Սամուէլ. Հեղի և Սամուէլ:

Նոր ուխտից:

Առակներ. Որոմի առակը. Անմիտ հարստի

առակը. Թագուցեալ դանձի և մարդարտի առակները. Մեծ ընթրիքի առակը:

Կարգ Աստուածպաշտութեան. Եկեղեցու ձևը և բաժանմունքը. Սրբազան անօթներ և զարդեր. Չգեսաներ. Գրքեր:

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս).

Հին ուխտից: Թագաւորներ:

Սաւուղ. Սաւուղը դառնում է թագաւոր Սաւուղի անհնազանդութիւնը. Դաւիթի ընտրութիւնը:

Սաւուղ և Դաւիթ. Դաւիթ Սաւուղի սրբունիքում. Դաւիթ և Գողիաթ. Սաւուղն ատում է, իսկ Դաւիթը սիրում է Յովնաթանին. Դաւիթի մեծահոգութիւնը. Սաւուղի մահը:

Դաւիթ. Դաւիթը դառնում է թագաւոր. Աբիսողոմ. Դաւիթի մահը:

Սողոմոն. Սողոմոնը դառնում է թագաւոր. Տաճարի շինութիւնը. Սողոմոնի փառքը և անկումը:

Թագաւորների անկումը:

Յերոբոամ և Ռորոփամ. Յերոբոամ և Ռորոփամ. Եղիա և սրա մահը. Իսրայէլի և Յուդայի թագաւորութեան կործանումը. Բաբելոնի գերութիւնը. Համառօտ հայեացք ցՔրիստոս:

Նոր ուխտից:

Առակներ. Փարիսեցի և մաքսաւոր. Չար

ծառայի առակը Հարստի և աղքատ Ղազարոսի  
առակը. Այգու Մշակների առակը. Սամարացու  
առակը:

Յովհաննէս Մկրտչի ծնունդը, քարոզու-  
թիւնը և մահը:

Դաւանութիւն. Հաւատամքը համառօտ բա-  
ցատրութեամբ:

Կարգ Աստուածաշտուծեան. Նուիրապե-  
տութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ և պատա-  
րագի նշանակութիւնը:

### Ե. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս).

Նոր Ուխտ: Նոր ուխտն անցնել սիստեմա-  
տիկ կերպով:—Փլխաւոր ուշադրութիւնը պիտի  
գարձնել քրիստոնէական սկզբունքների վրա:  
Հետեւեալ նիւթերից աստղանիշ հատուածները,  
որպէս նախորդ տարիներում անցած նիւթեր,  
շօշափել և լրացնել այն չափով, որչափ որ կա-  
րելուր կլինի նոր նիւթերի հետ կապ պահպանե-  
լու և նրանց լուսաբանելու համար:

\* Ծնունդ. \* Տաճարին ընծայուելը. Արևելքի  
մոզերը և Եգիպտոս փախչելը. Տասներկու տա-  
րեկան Յիսուսը տաճարում. \* Յովհաննէս Մկրտ-  
չի ծնունդը. \* Յովհաննէս Մկրտչի քարոզութիւ-  
նը. \* Յիսուսի մկրտութիւնը. Առաքեալների  
մկրտութիւնը. Յիսուս և մանուկներ. Ռ՛վ է մեծ  
երկնից արքայութեան մէջ. Կափառնայումի

հարիւրապետը. \* Փարիսեցի և մաքաւոր.  
\* Անառակ որդու առակը. Զակքէոս. \* Ռդըր-  
մաժ սամարացու առակը. Այրի կնոջ լուծան.  
\* Զար ծառայի առակը. Քանանացի կինը.  
Յիսուս քարոզում է Նազարէթում. Հարուստ  
երիտասարդը. \* Անմիտ հարստի առակը. Կո-  
րուսեալ ոչխարի և դրամի առակը. Պետրոսի  
խոստովանութիւնը. \* Յովհաննէսի մահը. \* Սեր-  
մնացանի առակը. \* Որոմի առակը. \* Մեծ  
ընթրիքի առակը. \* Այգու մշակների առակը.  
\* Քանքարների առակը. \* Մեծատան և աղքատ  
Ղազարոսի առակը. \* Տասը կոյսերի առակը.  
Վերջին դատաստան. Լեռան քարոզը և ինն  
երանութիւն. Լուացումն, կերակուր, պահք և  
շաբաթ. Սամարացու կինը. Մարիամ և Մար-  
թա. Յիսուսի թշնամիները. Յիսուսի օծումը  
Բեթանիայում. Յիսուսը մանում է Երուսաղէմ.  
Յիսուսը վիճարանում է թշնամեաց հետ. Յու-  
դայի մասնութիւնը. \* Ոսնայուայ և խորհրդ-  
աւոր ընթրիք. Յիսուսը Գեթսեմանում. Յիսու-  
սը քահանայապետի առաջ. Պետրոսի ուրացու-  
թիւնը. Յիսուսը Պիղատոսի առաջ. \* Սաչե-  
լութիւն. \* Թաղումն. Յարութիւն. Համբարձում:

### Զ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Գործք առաքելոց:

Հոգեգալուստ. Անանիա և Սափիրա. Եօթը  
սարկաւազների ընտրութիւնը և ժողով աղքա-

ասաց հոգաբարձութեան. Առաքեալները բարձրագոյն ատեանի առաջ. Եթովպացի ներքինին. Կուսնեյիտսի դարձը. Սաեփաննոսի մահը. Սաւուղի դարձը. Պօղոսը Դամասկոսում և Երուսաղէմում. Առաքելական առաջին, երկրորդ և երրորդ ուղևորութիւնները. Պօղոսի դատը. Պօղոսի Հռովմ գնալը և մահը:

Շարականներ:

Ս. Էջմիածնի. — «Էջմիածին ՚ի Հօրէ...»

Հռիփսիմեանց. — «Անձինք նուիրեալք...» և Հ. Փ. աները:

Յարութեան. — «Այսօր յարեալ...» 3 տուն:

Ծննդեան. — «Սորհուրդ մեծ և սքանչելի...» 3 տուն:

Լուսաւորչի. — «Այսօր զւարձացեալ...» մի տուն:

Վարդանանց. — «Նորահրաշ...» 3 տուն:

II. Հ Ա Յ Ո Յ Լ Ե Ձ Ո Ւ

Ա. ՏԱՐԻ (շաբաթական 6 դաս)

1. Կարդալ-պատմել

Աշակերտները պէտք է սովորեն ամբողջ այբուբենի տառերը կարդալ և գրել. պէտք է անցնեն գլխատառերը և վարժ կերպով կարդան բառեր ու նախադասութիւններ, վերջը նաև

փոքր յօդուածներ: Անգիր անել կարճ ոտանաւորներ: Աշակերտները պէտք է կարողանան սովորած յօդուածը հարցերով և երբեմն նաև առանց հարցերի պատմել:

2. Քերականութիւն

Կէտադրութեան և առոգանութեան նշանները:

Չայնաւոր և բաղաձայն տառեր:

Երկարբառներ, վանկերի բաժանումը:

3. Իրաւոր

Հասարակ և գլխազիր տառերը կանոնաւոր գրել. արտադրել առանձին բառեր ու կարճ նախադասութիւններ: Թելադրութեամբ գրել սովորած բառերն ու պարզ նախադասութիւնները:

Բ. ՏԱՐԻ (շաբաթական 6 դաս)

1. Կարդալ-պատմել

Կարդալ փոքր հատուածներ առանց նախափարժութիւնների, չշտապելով և լաւ արտասանութեամբ. կարդացած յօդուածի բովանդակութիւնը պատմել: Դիւրըմբռնելի բանաստեղծութիւններ բերան անել:

2. Քերականութիւն

Նախադասութիւնների վերլուծումը՝ հարցերով, առանց տերմինների:

## 3. ԳՐԱՆՈՐ

Ճիշտ արտագրութիւն, թելադրութիւն. գրել անգիր արածը: Գրաւոր պատասխաններ ուսուցչի առանձին հարցերին:

## Գ. ՏԱՐԻ (շաբաթական 5 դաս)

## 1. Կարգալ-պատմել

Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ յօդուածները կարգալիս աշակերտները կարողանան սահուն և մտքի համեմատ շեշտադրութեամբ կարգալ: Նրանք պէտք է կարողանան ճիշտ նախադասութիւններով և ազատ արտայայտել իրենց մտքերը, ճշտութեամբ պէտք է պատմեն սովորած յօդուածների բովանդակութիւնը: Պէտք է կարճ, մատչելի ոտանաւորներ իւրացնեն, բերան անեն և պատմեն պարունակութիւնը՝ ուսուցչի աուած հարցերի օգնութեամբ:

## 2. Քերականութիւն

Ամբողջ այբուբենի տառերի անունները. տառերի թուական նշանակութիւնը:

Տողադարձի պարզ կանոնները. եզակի և յօգնակի. յօգնակի կազմելը. պարզ և բարդ բառեր. նախադաս և յետադաս մասնիկների մասին հասկացողութիւն:

Առարկայ. գոյականի փոփոխութիւնը հարցերով. յատուկ և հասարակ անուններ. յօգի մասին հասկացողութիւն:

Գործողութիւն. ներկայ, անցեալ և ապանի: Որպիսութիւն. անականը գոյականի հետ և անոնց գոյականի:

Պարզ նախադասութիւնների վերլուծումը՝ տերմիններով:

## 3. ԳՐԱՆՈՐ

Արտագրութիւն, թելադրութիւն, սովորած յօդուածների ամփոփ փոխադրութիւն: Գրել ինքնուրոյն կազմած նախադասութիւններ:

## Գ. ՏԱՐԻ (շաբաթական 5 դաս)

## 1. Կարգալ-պատմել

Աշակերտները պէտք է կարողանան ճիշտ առողանութեամբ և սահուն կարգալ աւելի բարդ յօդուածներ և իւրացնել պարունակութիւնը: Պէտք է կարողանան նոյնպէս չափական բանաստեղծական գրուածքների բովանդակութիւնը պատմել:

## 2. Քերականութիւն

Հոմանիշ բառերի նշանակութիւնը և ուղղագրութիւնը: Կէտադրութիւն համաձայն նախադասութեան: Գոյականների կանոնաւոր հոլովումը, բայերի կանոնաւոր խոնարհումները: Տարբերել նաև խօսքի հետեւեալ մասերը՝ դերանուն, թուական անուն, նախադրութիւն, ձայնարկութիւն, մակրայ, շաղկապ: Ընդարձակ և միաւորեալ նախադասութիւններ:

## 3. ԳՐԱՈՐ

Աւելի ընդարձակ թելադրութիւն և փոխադրութիւն, շարադրութիւն՝ թէ անցած յօդուածներին և թէ աշակերտներին առօրեայ կեանքին վերցրած՝ դասարանում մշակուած ծրագրով:

## Ե. ՏԱՐԻ (շաբաթական 5 դաս)

## 1. Կարդալ-պատմել

Ընդարձակ յօդուածներ կարդալ, իւրացնել և բովանդակութիւնն ազատ պատմել, յօդուածը բաժանել իւր բաղկացուցիչ մասերի: Յօդուածը համառօտել՝ տարբերելով էականը երկրորդականին: Անդիր արած ոտանաւորների բովանդակութիւնն ազատ և արձակ պատմել:

## 2. Քերականութիւն

Անկանոն հոլովներ, անկանոն խոնարհումներ, գերանունների հոլովումները:

Տարբերել գլխաւորն ախաղասութիւնը երկրորդականին: Երկրորդական նախադասութիւնների տեսակները:

## 3. ԳՐԱՈՐ

Թելադրութիւն, փոխադրութիւն և շարադրութիւն աշակերտներին մատչելի նիւթերի մասին, ուսուցչի տուած որոշ ցուցմունքների համաձայն:

## 2. ՏԱՐԻ (շաբաթական 4 դաս)

## 1. Կարդալ-պատմել

Բացատրել և պատմել ընդարձակ և դժուար յօդուածներ: Կարդալ և հասկանալ արևմտեան բարբառով գրուած պարզ հասուածներ և բովանդակութիւնը պատմել մեր գրական լեզուով: Բերան անել արևելեան և արևմտեան բարբառներով գրուած ոտանաւորներ:

## 2. Քերականութիւն

Բառակազմութեան գիտակցական ըմբռնում, բայանուն, բայածական, գերբայ:

Բարդ նախադասութիւններ, երկրորդական նախադասութիւնների կրճատում:

Արևմտեան աշխարհաբարի քերականական ձևերը ըմբռնել արևելեան աշխարհաբարի համեմատութեամբ և օգնութեամբ:

Անցած ամբողջ քերականական նիւթի սխտեմատիք դասաւորութիւնը:

## 3. ԳՐԱՈՐ

Ինքնուրոյն շարադրութիւններ ուսուցչի տուած թեմաների մասին՝ աշակերտների սովորած առարկաներին և շրջապատող կեանքի երևոյթներին:



ների: Գրաւոր պատասխաններ ուսուցչի տուած հարցերին:

Ե. ՏԱՐԻ (շաբաթական 5 դաս)

1. Բանաւոր

Ընթերցանութիւն աւելի բարդ յօդուածներէ: Պատմութիւն հարցերով և առանց հարցերի: Բերանացի ոտանաւորներ: Վարժութիւններ մասնաւորապէս հայերէնից տարբեր խնդրառութիւն ունեցող բայերի գործածութեան: Վարժութիւններ բայերի տեսակների (ВУДЫ) գործածութեան:

2. Քերականութիւն

Գոյականի հոլովումը և բայի կանոնաւոր խոնարհումը տերմիններով: ВУДЫ, գերանուն, թուական անուն, մակբայ, շաղկապ, նախդիրներ և ձայնարկութիւն:

Ուղղագրութիւնից—0 և 0 բարդ բառերի մէջ, կոկորդային բաղաձայների փոփոխութիւնը: Յ ունեցող գործածական արմատների աղիւսեակը հետզհետէ կազմել:

3. Գրաւոր

Բացի նախորդ վարժութիւններից, փոխադրութիւններ անցած կարճ յօդուածներէ:

2. ՏԱՐԻ (շաբաթական 4 դաս)

1. Բանաւոր

Ընթերցանութիւն, պատմութիւն սեփական բառերով: Յօդուածի բաժանումը բաղկացուցիչ մասերի: Յօդուածի համառոտութիւն: Անգիր արած ոտանաւորների բովանդակութեան պատմութիւն այն դէպքերում, երբ զրանից ոտանաւորի գեղեցկութիւնը չի կորչում:

2. Քերականութիւն

Ածական և թուական անունների և գերանուն հոլովումը: Մակբայի սովորական կազմութիւնը: Գլխաւոր և երկրորդական նախադասութիւնների տարբերը: Վարժութիւններ յարաբերական գերանուն գործածութեան:

3. Գրաւոր

Բացի նախորդ վարժութիւններից, փոքրիկ շարադրութիւններ դասարանում ուսուցչի օգնութեամբ նախօրօք մշակուած նիւթի մասին:

IV. Թ Ո Ւ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. ՏԱՐԻ (շաբաթական 5 դաս)

Նիւթ ընդունելով 1—20 թիւը՝ աւանդել այս թուերի զաղափարները, նրանց շարքերը, 4 հիմնական գործողութիւններն և սրանց պարզ կապակցութիւնները՝ գլխաւորապէս բերանացի: Բաժանման գործողութեան վերաբերեալ միայն եր-

1007  
31997



կարուլթեան չափելու և պարզօրէն բաժանելու գաղափարները տալ սկզբները, իսկ վերջը նաև՝ բովանդակութեան, իհարկէ այս ամենը յատուկ գննական միջոցներով: Նախ ուսուցանել միայն գումարումն ու հանումն, և ապա այս երկուսից դուրս բերել բազմապատկումն ու բաժանումը՝ իբրև կրճատ եղանակներ:

Այս դասընթացքի մէջ կոտորակներից կարող են մտնել  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{4}$  և  $\frac{1}{3}$ , իսկ անուանական թուերից՝ սաժէն, արշին, վերշոկ, օր, շաբաթ և ամիս:

### Բ. ՏԱՐԻ (շաբաթական 5 դաս)

Թուերի շրջան 1—100 տասնաւորներով ու միաւորներով: 4 գործողութիւնները՝ գլխաւորապէս բանաւոր: Գրաւոր խնդիրները ձևով ու բովանդակութեամբ դեռ նման են բանաւորին:

Մանուկների յիշողութեան գերակշռութեան այս շրջանում պէտք է յաղթել տանք բազմապատկութեան աղիւսակի գժուարութիւնները, աւելի բազմակողմանի կերպով անցնենք գումարումն ու հանումը: Առանձին ուշադրութեան առարկայ պէտք է դարձնենք նպատակայարմար բանաւոր եղանակներով լուծումը (թուերը նախ մօտաւոր կլոր թուերի վերածելով):

Կոտորակներից  $\frac{1}{5}$ ,  $\frac{1}{6}$ ,  $\frac{1}{8}$  և  $\frac{1}{10}$  գործադրել ժամանակի, տարածութեան, ծանրութեան ու դրամի քանակութեանց և վերացական թուերի մասերը գտնելու համար գանազան խնդիրներում: Անուանական թուերից՝ նաև ուրբի, կոպէկ, փութ, ֆունտ, արշին, սաժէն, վերշոկ:

### Գ. ՏԱՐԻ (շաբաթական 4 դաս)

Թուերի շրջան 1—1000 չորս գործողութիւններով:

Այս դասարանում հետզհետէ դատոււմ են բանաւոր խնդիրները դրաւոր խնդիրներից, և վերջիններս ստանում են իրենց առանձնայատուկ բովանդակութիւնը: Անուանական թուերը դեռ պարզ են, երկու անունով միայն մէջ են բերւում ամեն մի խնդրի մէջ (փութ ու ֆունտ, արշին ու վերշոկ և այլն): Աւելի ընդարձակ վերածումներն ու անդրադարձումները հետևեալ դասարաններին են վերապահւում: Անուանական թուերով խնդիրներ: Ժամանակի (նաև տարուայ օրերը), ծանրութեան (փութ, ֆունտ, մսխալ), երկարութեան (մղոն, վերսա, ոտք) և դրամական չափերը շուկայի, տան, խոհանոցի, պարտէզի շրջաններից վեր առած խնդիրների մէջ այս դասընթացքի նիւթերը պէտք է կազմեն:

### Դ. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

1—1,000,000-աւոր վերացական ու բարդ անուանական թուերով խնդիրներ: Տասնորդական կոտորակների 4 գործողութիւնները, 1—10 յայտարար ունեցող հասարակ կոտորակների չորս գործողութիւնները: Հասարակ կոտորակները տասնորդականի և վերջինս հասարակի վերածելը: Քառակուսի և խորանարդ չափերը:

Միութեան վերածելով 3 յայտնի անդամների միջոցով 4-րդի գտնելը: Ռուսական համ-

ընչով և առանց այս գործիքի առ ու ծախքի խնդիրներ լուծել տասնորդական կոտորակներով, օրինակ՝ Խնչ արժէ 21<sup>5</sup>/<sub>4</sub> ֆունտը, եթէ 1 ֆ. արժէ 2,23 կոպէկ: Տոկոսի ու զեղջի կանոնները՝ միութեան վերածելով, իսկ հատուցման ժամանակակէտին վերաբերեալ խնդիրները զանց առնել՝ իբրև կեանքի սովորական պահանջներէից գուրս տարր:

Խնդիրների իրաշրջանները՝ բնական գիտութիւնները, աշխարհագրութիւնը, պոստն ու երկաթուղին, մակերևոյթներն ու ծաւալը, գնումն ու վաճառումը:

### Ե. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

Բաժանելիութեան նշանացոյցները մինչև 10 թիւը, բացի 7-ին վերաբերեալից: Ընդհանուր բաժանարար, փոքրագոյն բաժանելի: Պարզ ու բարդ երէց կանոն միաւորի վերածումով:

Հասարակ կոտորակների վրայ բոլոր չորս գործողութիւնները: Պարբերական կոտորակի վերածումը հասարակի և ընդհակառակը:

Խնդիրները վերցնել նախընթաց դասարանում նշանակուած իրաշրջաններից, երկրաչափական ձևագիտութիւնից և առանին տնտեսութիւնից, մանաւանդ օրիորդների համար, իսկ սղանների համար աշխատութեան ու ժողովրդական տնտեսական շրջաններից:

### Զ. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

Բարդ առկոսների մասին գաղափար տալ

մի քանի խնդիրների միջոցով: Ընկերութեան կանոն, ակցիա և դիվիդենդ՝ այդ կանոնի հետ կապուած: Խառնուրդի կանոն՝ իրական կեանքում սովորական խնդիրների շրջանում:

Օտարագրի գլխաւոր դրամների արժէքների մասին գաղափար: Զուտ ոսկին իբրև հիմնական չափ զանազան դրամների և ապրանքների: Գնահատութիւն:

## V. ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

### Ա. ՏԱՐԻ. (շաբաթական 2 դաս)

Նկարել ուղիղ գծեր, ուղղահայեաց, հորիզոնական և թեք: Զուգահեռական գծեր: Անկիւններ՝ ուղիղ, բութ, սուր:

Չեք՝ եռանկիւններ, քառանկիւններից՝ ուղղանկիւնի, քառակուսի և շեղական:

Գծերի բաժանումը աչքի չափով կենսա և զոյգ հաւասար մասերի:

Կանոնաւոր բազմանկիւններ: Զուգընթացաբար համապատասխան նաշխեր:

Կոր գծեր, կոր ձևերից՝ շրջան, արամագիծ, շառաւիղ: Բազմանկիւնները շրջանի մէջ:

Ընդօրինակութիւն գրատախտակից՝ ուսուցչի նկարած հարթ օրնամէնաների, նախ պարզ, հետգհեաէ աւելի բարդ՝ ուղիղ և կոր գծերից:

Գասարանում ուսուցչի ցոյց տուած լաւ ծանօթ հասարակ, տափակ, ուղղագիծ և կորագիծ առարկաների ուրուագծումը յիշողութեամբ:

օր. զիրք, տեարակ, քարետախտակ, շրջանակ, ծրար, պայտ, օղակ, խնձոր, զնդակ...

Բ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Կոր ձևերից՝ ձուածիր, ձուածև:

Ծանօթութիւն հիմնական դոյների հետ:

Դասարանում նկարուած անկիւնաւոր նախշերի ձևով՝ տանը ծանօթ դոյնի թղթերից կըրատեալ մասեր և այդ մասերից կպցնելով կազմել նոյն տեսակ նախշեր:

Ընդօրինակութիւն գրատախտակից համեմատաբար աւելի բարդ ուղղագիծ և կորագիծ հարթ օրնամենաների:

Ծանօթ պարզ առարկաների իսկականից նկարչութիւն (գծաւոր)՝ ուղղագիծ և կոր գրծերով. օր. դուռ, լուսամուտ (ձախատի կողմից), շրջանակ, կացին, մանգաղ, գերանդի, թի, բահ, տանձ, ակնոց, ձու, սալոր, բողետ, բորդիւր, պարզ տերևներ: Նոյնը և յիշողութեամբ:

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Գաղափար խզնջածև և ոլորածև գծերի մասին:

Անկանոն բազմանկիւնիներ:

Հեռանկարի (պերսպեկտիւ) տարրական հիմունքները՝ զիտողութեամբ:

(Նկարել հարթ ուղղագիծ մակերևոյթներ՝ կարճացած ձևով):

Երկրաչափական մարմիններ—խորանարդ.

քառանկիւն հատուածակողմ (նկարել իսկականից): Տանը կարատել յիշեալ մարմինների բացուած ձևերը կարտոնից և կպցնելով մարմիններ կազմել:

Գրատախտակից ընդօրինակութիւն սճաւոր օրնամենաների:

Գունաւոր մատիաների գործածութիւնը:

Տերևների ուրուագծումը իսկականից, հասարակից մինչև խաղողի տերևը:

Բնականից նկարել թիթեռներ. պարզ ծաղիկներ, խղուշներ, ստրէներ, փետուրներ և այլն: Նոյնը և յիշողութեամբ:

Դ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Հեռանկարի հիմնական սկզբունքները (տես սողութիւն):

(Նկարել հարթ շրջանակներ կարճացած ձևով):

Երկրաչափական մարմիններ (կրկնել խորանարդը). բուրդ (մի քանի հիմքով). կոն, գլան. գունդ (նկարել իսկականից), գլխաւոր ստուերներով:

Երկրաչափական մարմիններին նման առարկաների ուրուագծումը. օր. արկղ, պահարան, դոյլ, բաժակ, տակառ, շաքարի գլուխ, ձողար, ձմերուկ և նման առարկաներ:

Բարդ տերևներից օրնամենաներ. վարդանման ծաղիկներ. արմաւենիներ (պալմեակա): Նոյնը և յիշողութեամբ նկարել:

Ջրաներկի գործածութիւնը լուկ դոյն տալու համար:

Ե. ՏՍՐԻ (շաբաթական 1 դաս)

Քաղաքի և ստուերի մասին:

Երկրաչափական մարմիններ զանազան դիրքերով նկարել գլխավոր և երկրորդական ստուերներով:

Երկրաչափական մարմինների հատած ձևեր նկարել. նոյն մարմինների խմբանկարներ (գրուպ):

Կուժեր, սափորներ, վազեր, պտուղներ և այլ գեղեցիկ-ձևավոր առարկաներ բոլոր ստուերներով, իսկ ծաղիկներ միայն գլխավոր ստուերներով: Նոյնը և յիշողութեամբ նկարել:

Համաչափ (սիմետրիկ) ձևեր նկարելու վարժութիւններ միաժամանակ երկու ձեռքով, ամերիկական սիստեմով:

Ձրաներկի մի երանգի (տոն) գործածութիւնը (սեպիա, տուշ) կատարեալ ստուերումով:

Ուսուցչի տուած հիմնական տարրերից տանը նաշխեր և վարդեր յօրինել (ստիլիզացիա):

Ծ ա ն օ թ. նպատակաշարմար է այս դասարանից օրիորդաց դպրոցներում աւելի ոյժ ապօրնամենատալինհիւսուածոյ նկարներին, զանազան պտուղների, ճիւղքերի, ողկոյցների յօրինման (ստիլիզացիա), նոյնպէս և տառեր ու մոնոպրամներ կազմելու, որ և կարևոր կլինեն նրանց՝ ձեռագործի ժամանակ:

Զ. ՏՍՐԻ (շաբաթական 1 դաս)

Իրեգէններ, խոշոր կահկարասիք. տան իրեր (լամպ, մոմակալ), ողկոյցներ, բարախի, ուքի, ըն-

կուզենի ճիւղեր տերեւներով, ամբողջ ծաղիկներ՝ խաշխաշ, պուա, վայրի մեխակ, ճնճաղիկ և այլն. փնջեր՝ եթէ կարելի է՝ ջրաներկերով: Այս առարկաներից մի քանիսը յիշողութեամբ նկարել:

Ծանօթութիւն ճարտարապետական ոճերի հետ. նկարել հայկական ոճի բնորոշ և էական տարրերը:

Համառօտ ծանօթութիւն օտար ոճերի հետ՝ սպազրուած նկարների միջոցով:

Տարրական ծանօթութիւն պլաստիկ գեղարուեստի հետ:

## VI. ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՏՍՐԻ (շաբաթական 2 դաս)

Պարզ ֆրագներ և ապա երգերի միջոցով նպաստել աշակերտի լսողութեան, երաժշտական յիշողութեան և բիթմ գգալու զարգացման: Առաջին կիսամեակում ուսուցիչն է բաղխում սալիս, իսկ երկրորդում իրենք աշակերտները:

Բ. ՏՍՐԻ (շաբաթական 2 դաս)

Քիչ աւելի բարդ երգեր պարզ չափերով ( $\frac{2}{4}$  և  $\frac{3}{4}$ ), պահանջելով որ աշակերտներն իրենք չափ տան: Տարուայ վերջին նաև  $\frac{4}{4}$  չափով երգեր: Չափների տեսողութեան մասին հասկացողութիւն ապա, վանկերի վրայ կէտեր նշանակելով, նոյնպէս և շնչի տեսողութեան մասին:

## Գ. ՏՄՐԻ (շաբաթական 2 դաս)

Երգել տալ մաժոր առաջին քառունակը, ճանաչել տալով իւրաքանչիւր ձայնի աստիճանը—տեղը քառունակի մէջ: Քառունակի իւրաքանչիւր ձայնը նշանակել թուանշաններով կամ տառերով (1, 2, 3, 4 կամ ա, բ, գ, դ): Երգածը զրել և զրածը կարգալ: Երկրորդ կիսամեակից՝ նոյնպիսի վարժութիւններ մաժոր երկրորդ քառունակի վրայ (5, 6, 7, 1 կամ ե, գ, է, Ա).—Տեղութեան նշան մի ութերորդ:

Այս երեք դասարաններում աշակերտը պէտք է վարժուի տոնի բարձրութիւնն ու տեղութիւնը ըմբռնելու և զրով արտայայտելու՝ վերոյիշեալ սխտեմով:

## Գ. ՏՄՐԻ (շաբաթական 2 դաս)

Համեմատութիւն լեզուի և երաժշտութեան: Երաժշտական տոն, նրա յատկութիւնները—բարձրութիւն, տեղութիւն, ոյժ, տեմք: Ձայնահնչիւնների անունները. օկտաւ: Բնական մաժոր գամման. բնական մինոր գամման (թուանշաններով կամ տառերով): Ձարգարանքներ—ընդհարումներ, խաղ:

## Ե. ՏՄՐԻ (շաբաթական 2 դաս)

Համեմատութիւն լեզուի զրութեան և երաժշտութեան գրութեան: Միզմանի և դձային (հինգզմանի) սխտեմներ: Գծային սխտեմի զրութիւն: Հնգային սխտեմի զրութիւն: Սոլ և

Ֆա բանալիներ: Երգի և շնչի տեղութեան չափերի զրութիւն: Դիատոնիկ և խրոմատիկ գամմաներ: Կիսատոններ: Դիէզ, բէմօլ, բէկար: Բնական մաժոր և բնական մինոր գամմաների տարբերութիւնը: Գծային սխտեմով զրել և կարգալ երկու գամմաները:

## Չ. ՏՄՐԻ (շաբաթական 1 դաս)

Ձանազան աստիճաններից կազմել մաժոր և մինոր գամմաներ: Գամմաների նշանները: Լադեր: Հասկացողութիւն եկեղեցական լադերի մասին և մասնաւորապէս հայոց եկեղեցական երաժշտութեան ձայների և կողմերի մասին: Ասիական և հարմոնիկ մաժոր գամմաների կազմութիւնը: Կոնսոնանս և դիսոնանս. դիսոնանսի լուծումը:

Թէօրիայի հետ միաժամանակ պէտք է անցնել գործնականը՝ վարժութիւններ, երգելով ու զրելով: Բոլոր դասարաններում պէտք է անցնել երգեր—ժողովրդական, ազգային և եկեղեցական: Երգեցողութիւնը պէտք է լինի մենաձայն (սօլօ) և խմբական: Հինգերորդ տարուց կարելի է երկձայն խմբական երգեցողութիւն սկսել: Երգերը պէտք է սովորեցնել՝ հեշտութեան ու մատչելիութեան նայելով: Չպէտք է աշխատել անսլատառ երգերը յարմարեցնելու անցած թէօրիայի դասընթացքին:

## VII. Ա Ր Հ Ե Ս Տ Ն Ե Ր

## Ա. ՉԵՌԱԳՈՐԾ

(Օրինողների համար)

## Ա. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Ղայթան (шнуръ): Շերտիկ գործելը (полоска) 2 ճաղով (20 հանգոյց). Երեսի աջ հատ գցելը (правая петля). Շուռ-տուած հատ գցելը (лѣвая петля). Չգողիկ (ластикъ). Շաւիղ (дорожка). Հատ պակասացնելը (спускъ). Հատ վերջացնելը (запускъ):

Սովորած եղանակների գործադրութիւնը ամբողջը կազմելու համար՝

Պարկ. Գուլպայի կապ (подвязка). Կրծկալ. Բազպան, թենոց և այլն:

Նիւթը.— կապ-թել (вязка).— Դեղնագոյն բամբակէ թել № 8 և ճաղերի համապատասխան № № (վարժուհու ընտրութեամբ):

## Բ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Երկարբուկ գուլպայ գործելը— 10 դաս:

Կար 50 դաս:

Երկարբուկ գուլպայ գործելը:— Գուլպայի բուկը (ճիտքը) (порожникъ): ա. Գուլպայի բերան կամ ձգողիկ. բ. Գուլպայի ուղիղ մասը. գ. պակասեցրած մասը. դ. պակասեցնելուց յետոյ ուղիղ մասը:

Կիցքի օրինակներ (образцы стежковъ): Շուռ-լալ. Յեակար. Դարձկար:

Կարերի օրինակներ. Կրկնակի կար (Ֆրանսիական կար): Ժապաւէն (тесьма) վրակարելը դարձկարով:

Գործադրութիւն. փոքրիկ բարձի երես, վրան դարձկարով կարած նշանագրով (կոճակների փոխարէն՝ դարձկարով վրակարած ժապաւէն):

Լրացուցիչ զբաղմունք. Մանկական կրծկալ—անձեռոցիկ (վրան դարձկարով մի նկար): Պարկ:

Նիւթը. խսիր գործուածք (ткань рогожка): Հարթակարի թել № 20 (բացկապոյտ գոյն): Ասեղ № 5:

Կարի համար—գամեստիկ, կոճի թել № 40, ասեղ № № 6 և 7. բարձի երեսի համար—գամեստիկ կամ կոշտ մազեպալամ, համապատասխան ասեղ և կոճի թել:

## Գ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Գուլպայ գործելը 10 դաս, կար 50 դաս:

Գուլպայի ներքին մասը կամ թաթը: Կրունկ. Կրունկի պակասեցնելը. Նեաիկ (стрѣлка). Ուղիղ մասը. Գուլպայի քիթը:

Կիցքի օրինակներ. Թեք կիցք. Թեք ամրակար (черезъ край). Հասարակ խաչկար. Տօղունակար (стебельчатый).

Կարերի օրինակներ. Վրակար (Рубецъ). Ամրակար (Черезъ край). Փոթկարը (Նաւոճը) գօ-

տիին միացրած, շուրջը ծալքեր դարձած. Թափանցիկ կամ ծակոտիէն դարձկար (ажурная строчка). Ժապաւէն վրակարելը զանազան ձևով: Գործադրութիւն. Թաշկինակ՝ վրան խաչկարով նշանագիր. Գոգնոց:

Հրացուցիչ զբաղմունք. Սրբիչ (դաստառակ) Թափանցիկ դարձկարով և ցօղունակարով:

Նիւթը. Կանվա—կօնդրէս. Հարթակարի բաց կապոյտ թել № 20. Մազեպալամ. Կոճի թել № 50 Ասեղ № 8:

### Գ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Գիցքի օրինակներ. Հանգոյցի կար (петельный шовъ). Ճիւղակար (елочка):

Կարերի օրինակներ. Կրկնակի վրակար. Քառակուսի կտոր կիսաշրջան կտրուածքով, վրան կարած թէք բիէ և շուրջը ժանեակ (հաշեայ, кружева). Քառակուսի կտոր՝ վրան կարած սովորական և թելէ կոճկամայր:

Գործադրութիւն. Կանանց շապիկ՝ ուսին կոճակ և կոճկամայր (ցանկութեան համեմատ):

Հրացուցիչ զբաղմունք. Զարդկար (мережка). Ճիւղակար. Ժանեակ միացնել շապիկը զարդարելու համար:

Նիւթը. Դամեստիկ. Կանվա—կօնդրէս և բաց կապոյտ թել № 20. Մազեպալամ և սպիտակ կոճի թել № 60. Ասեղ № 8, 9.

### Ե. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Չու. Շապիկ ձևելը. Վարտիկ ձևելը:

Կարկատան. Կարկատան՝ միացրած կրկնակի վրակարով. Կարկատան՝ միացրած ամրակարով. Կարկատան միացրած խաչաձև կարով (расширочный шовъ):

Կարերի օրինակներ: Դուրս կտրուածքին շերտ կպցնելը (2 տես). Նախապատրաստական օրինակ վարտիք կարելու համար:

Գործադրութիւն. Կանանց վարտիք:

Նիւթը. I տեսակի կարկատանի համար—մազեպալամ. II տեսակի համար—բրդէ կտոր. III տեսակի համար—մահուզ կամ Ֆլանէլ:

Հրացուցիչ զբաղմունք. Ընդհանուր հասկացողութիւն զայնադի գործի մասին (тамбурное вязание):

### Զ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Չու. Շրջագգեստ ձևելը. Կոֆտա ձևելը:

Հցուածք (шточка). Քաթանի լցուածք կոնգրէս կանվայի վրայ. Քաթանի լցուածք զուլպայի կտորի վրայ (կտորը պէտք է լինի քառակուսի):

Կարերի օրինակներ. Ֆէտտոններ. Կրկնակի ծալք (бантовая складка) կոճակով և կոճկամայրով:

Գործադրութիւն. Կանանց ամենահասարակ հագուստ: Զորս կտորից բազկացած շրջագգեստ ձևել և կարել: Անգլիական բլուզ ձևել և կարել կոֆտայի օրինակով:

Նիւթը. Լցուածքի համար—կոնդրէս—կանվա

և բաց կապոյտ թեկ № 20. Զգեստի համար—  
հասարակ չիթ:

### Բ. Չ Ե Ռ Ն Ա Ր Հ Ե Ս Տ

Բոլոր դասարաններում շաբաթական 2—2  
դաս յատկացում է տեղական նշանակութիւն  
ունեցող գործնական պարապմունքների՝ տեղա-  
կան դպրոցական վարչութիւնների ընտրութեամբ,  
թեմական խորհուրդների որոշմամբ և Վեհափառ  
Հայրապետի հաւանութեամբ:

### VIII. ԻՐԱԶՆՆՈՒԹԻՒՆ

#### Ա. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Դասարան: Դասարանում գտնուող լրերը: Աջ,  
ձախ, վերև, առաջ, ետև: Բակ (սանդուղք, պար-  
տէզ, եթէ կայ), սահման: Արև, լոյս և ստուեր, արևի  
ծագելը, մայր մանելը, առաւօտ, կէսօր, երեկոյ,  
գիշեր, կէս գիշեր: Արևելք, արևմուտք, հարաւ և  
հիւսիս: Տարուայ եղանակները, ամիսները, շաբա-  
թեայ օրերը, օրուայ ժամերը, ժամացոյց: Աստղեր,  
լուսին. ծնունդ լուսնի, կիսալուսին, լրումն լուսնի:  
Ամպեր, ծիածան, որոտում, փայլակ, կայծակ,  
քամի, փոթորիկ: Գոլորշի, ցօղ, եղեամ, անձրև,  
ձիւն, կարկուտ, սառոյց: Դպրոց, փողոց, բնա-  
կարան, գոմ, փարախ: Այգեքաղ, գինեգործու-  
թիւն, դաշտային աշխատանք: Աղբիւր, առու,  
գետ, գետափ (կամուրջ, ջրաղաց, եթէ կայ),  
լճակ (եթէ կայ): Դաշտ, բլուր, սար, հովիտ,

ձոր: Խոտ, ծաղիկ, բանջար, ծառ, պարտէզ, այգի,  
անտառ: Ընտանի կենդանիներ՝ ձի, էջ, շորի,  
կով, եղ, գոմէջ, ոչխար, ուղտ, այծ, շուն, կատու,  
մեղու, շերամ (եթէ կայ): Թռչուններ՝ հաւ, սագ,  
բադ, հնդկահաւ, ճնճղուկ, աղաւնի, ծիծեռնակ,  
սզոս: Մարդ՝ արտաքին նկարագրութիւն,  
անունը, մաքրութիւն, առողջապահութիւն, գլխատ,  
անկողին, ամանեղէն: Ընտանիք՝ անդամները՝ դերը  
և փոխադարձ յարաբերութիւնը՝ հայր, մայր,  
պապ, տատ, թոռ, ծառայ, աղախին: Ազգակցա-  
կան անունների բացատրութիւն՝ քեռի, տալ, ա-  
ներ, աներձագ, տայգր, ներ (տագերկին), և այլն:

#### Բ. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

Լոյս, ճրագ, լապտեր, լամպ, մոմ, ձէթ,  
նաւթ: Կրակ, բոց, ջերմութիւն, կերակուր  
եփելը, սենեակ տաքացնելը: Այրուղ նիւթեր՝  
փայտ, սծուխ, աթար, քարածուխ, մոխիր,  
փառարան: Դրամ՝ պղնձի, արծաթի, ոսկու. թղթ-  
թաղրամ, դանազան արժէքի դրամներ: Ցամա-  
քային ճանապարհներ՝ շաւիղ, կածան, ձիու,  
սայլի ճանապարհ, խճուղի, երկաթուղի: Զրային  
ճանապարհ՝ նաւակով, նաւով, շոգենաւով (եթէ  
կայ): Քաղաք, գիւղ, դրանց թաղերը: Քաղաքի  
նշանաւոր շէնքերը, եկեղեցիները, թատրոն,  
գործարան և այլն: Պատմական յիշատակարան-  
ներ, արձան, արձանագրութիւն: Վանք, դղեակ,  
ամրոց, գերեզմանատուն, աւերակներ: Պարապ-  
մունք՝ արհեստներ և արհեստանոցներ, գերձակ,

հօշկակար, հացթուխ, դարբին և այլն: Երկրագործութիւն՝ հողի մշակելը. վարել, ցանել, հնձել, կասել, աղալ և այլն: Գործիքներ՝ գուլթան, խոփ, մանգաղ, գերանդի, կամ, թի, եզան և այլն: Մշակելու հացահատիկներ՝ ցորեն, գարի, կորեկ, բրինձ, լազուլթ (սիմինդր կամ մայիս) և թելաբոյսեր՝ բամբակ, վուշ, կանեփ, կտաւաւ և այլն: Խաշնարածութիւն. բուրդ, կաթ, մածուն, սեր, իւղ, պանիր և այլն: Որսորդութիւն. որսի շուն—բարակ. որսի կենդանի—նապաստակ, եղջերու, աղանի, կաքաւ, նաև գայլ, աղւէս, արջ: Զինորսութիւն՝ կարթ, ցանց, ուռկան, օշխ (թարփ), ձուկ որսալու տեղական եղանակները: Տեղական սովորական ձկների տեսակները: Փողովրդական, տեղական ածներ, ուխտագնացութիւններ: Տեղական վայրերի հետ կապւած գրոյցներ, պատմութիւններ, առասպելներ, աւանդութիւններ: Գիւղի կամ քաղաքի շրջակայքը՝ գլորոցական ճանապարհորդութիւն: Գաղափար մասշտաբի մասին: Դասարանի, բակի, դպրոցի, եկեղեցու և փողոցի պարզ յատակագիծը:

## IX. ՀԱՅՐԵՆԼԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 4 դաս)

Ծննդավայր եւ մեծաւոր բնագաւառ:

Նախնական և պատկերաւոր տեղեկութիւններ ծննդավայրի մակերևոյթի կազմութեան,

ջրաղբական պայմանների, կլիմայի, գետնի յատկութիւնների, բուսական և կենդանական աշխարհի, մարդկային բնակատեղիների, պարապմունքների և արհեստների, հաղորդակցութեան ճանապարհների, երկնքի, արևի, լուսնի և աստղերի տեսանկյնի շարժումների ու փոփոխութիւնների, նաև մթնոլորտային երևոյթների մասին: Ծննդավայրի ուսումնասիրութիւնը իբրև մի միջոց՝ առաջնորդելու դէպի աշխարհագրական հասկացողութիւնների պարզաբանումը յետագայ տարիներում: Պարզ ծանօթութիւն աշխարհի կողմերի, հարթութեան, սարահարթի, ստորահարթի, լեռի, գագաթի, լանջի, ստորոտի, հովիտի, կիրճի, գետի, ակունքի, գետաբերանի, տաշտի, ավի, վտակի, լճի, ծովի, ծոցի, նաւահանգստի, բարեխառնութեան, կլիմայի, երկրագործութեան, հովութեան, թափառական և նստակեաց կեանքի, արհեստանոցի, գործարանի, արդիւնաբերութեան և արդիւնագործութեան, ներմուծող և արտահանող առևտուրի, իշխանութեան՝ հողեր և աշխարհական, եկեղեցական և պետական, կրթական հաստատութիւնների, գիւղի և քաղաքի, փողոցի, հրապարակի, շուկայի և այլն: Նախապատրաստական ծանօթութիւն քարտէզի, սրա պայմանական նշանների հետ և վարժութիւններ՝ գծագրելու սենեակի, բակի, փողոցի, քաղաքում՝ թաղի, իսկ գիւղում՝ գիւղի յատակագիծը, գետի և ձորի ուղղութիւնը, լեռան լանջերը, դիտած վայրերի և ամբողջ շրջակայքի քարտէզը ընդհա-

հուրը դժերով. ծննդավայրի բելիէֆը՝ մաս—մաս, յետոյ ամբողջովին՝ աւազից կամ կաւից:

Ծանօթութիւն մերձաւոր բնագաւառից (բնագաւառ ասելով՝ սէտք է վերցնել գաւառը ոչ թէ արհեստական, վարչական սահմաններով, այլ բնական կազմութեամբ): Կանգ առնել բնագաւառի մակերևոյթի կազմութեան, կլիմայի, ջրազրական և լեռնազրական պայմանների, բերքի, արդիւնագործութեան, բնակիչների ազգութեան և կրօնի, քաղաքների և գլխաւոր գիւղերի, ճանապարհների վրա և ցոյց տալ, թէ բացի եղած պարագամունքներից, այլ ևս ինչով կարելի է պարագել այդ գաւառում: Արտանկարել և հասկանալ բնագաւառի քարտէզը: Ցանկալի է, որ այս տարւայ դասընթացքը վերջանայ Անդրկովկասի և մերձաւոր երկիրների քարտէզի հետ ընդհանուր ծանօթութեամբ:

Տեղս կան աւանդութիւններ՝ կապուած ծննդավայրի և մերձաւոր բնագաւառի գանազան վայրերի ու առասպելական անձնաւորութիւնների անունների հետ, որտեղ որ այդպիսի աւանդութիւններ պահպանւել են ժողովրդի բերանում: Հայրենի առասպելներ և վէպեր՝ — Հայկ ու Բէլ. Արամ. Արա Գեղեցիկ և Շամիրամ. Տիգրան Երևանդեան. Վահագն. Վաղարշակ. Երևանդ Արշակունի. Արտաշէս Աշխարհակալ. Արտաշէս Բ. և Արտաւազդ. — Դաւիթ և Մհեր: Այս առասպելներն, աւանդութիւններն ու վէպերը մշակելիս՝ ուսուցիչը ոչ միայն նրանց հոգեբա-

նական և բարոյախօսական տարրերը պիտի վերլուծի, այլ և օգուտ քաղի նրանց մէջ պարունակուող նիւթերից՝ լուսաբանելու և մեկնելու պատմական սկզբնական հասկացողութիւնները՝ ազգ, ցեղ, տոհմ, գերդաստան, նահապետ, հայրենիք, սահման, գօրք, զէնք, կրօն, վարչութիւն, դատաստան, ստրուկ, գերի, փրկանք, հարկ, ոսճիկ գաղափարների մասին, և ծանօթացնելու նախնական քաղաքակրթական կեանքի յարաբերութիւններին: Եւսիսպատմական մարդը: Հնագոյն տարրական գիւտեր՝ նախնական գործիքներն ու զէնքերը (քարէ, բրոնզէ և երկաթէ), կրակ, բնակարան, հագուստ (մանելու և գործելու արհեստներ), ամանեղէն (փայտէ, կաւէ և ապակէ), դարդեր: Պարագամունքներ (որսորդութիւն, խաշնարածութիւն և երկրագործութիւն), փոխանակութիւն (հաղորդակցութեան միջոցներ), գասակարգեր (ազատներ, գերիներ և ստրուկներ, քրմեր): Ընտանեկան կեանք: Գիր:

Դ. ՏԱՐԻ (շաբաթական 4 դաս)

### Հայրենիքի ներկան

Ներածական ընդհանուր նախապատրաստութիւն: Երկրագունդ. առանցք և բևեռներ. երկրի շարժուելը առանցքի և արևի շուրջը և այս շարժումներից առաջ եկող երևոյթները երկրիս երեսին: Գլօբուս. հասարակած. արևադարձային գծեր, բևեռային շրջաններ. միջօրէակամներ: Կլիմայա-

կան գօտիններ: Տեղի երկայնութիւնը և լայնութիւնը: Կիսագնդեր: Զրի և ցամաքի բաշխումը երկրագնդի վրա: Մայր-ցամաք, կղզի, թերակղզի, պարանոց: Աշխարհի մասերը և նրանց ու հայրենիքի համեմատական մեծութիւնը: Հարթութիւններ— ստորահարթ, սարահարթ: Լեռնաշղթայ, լեռնաշխարհ, լեռնահանգոյց, հրաբուլդի: Ծովի յատակի կազմութիւնը— ծանծաղուաներ, ծովածայուեր: Ծովային հոսանքներ: Օդ. բարեխառնութեան հորիզոնական և ուղղահայեաց բաշխումը, օդի շարժումներ— հողմ: Քամիների և ծովային հոսանքների նշանակութիւնը: Տեղատուութիւն և մակերթացութիւն: Զուրը ցամաքի վրա. գետ և վտակ, գետի աւազան, ջրաբաշխական դժեր: Յաւիտենական սառուցի աշխարհ, ձիւնասահման, սառցարան, սառցադաշտ: Կլիմա, կլիմայի կախումը աշխարհագրական լայնութիւնից, մակերևոյթի կազմութիւնից և բարձրութիւնից, տիրող քամիներից ու ծովային հոսանքներից: Բոյսերի և կենդանիների տարածւելը ըստ աշխարհագրական լայնութեան և բարձրութեան: Մարդ, մարդկային ցեղերի բաժանումը, (աւելի մանրամասն հնդկահրոպական ցեղի ճիւղերի մասին):

Ռուսական Հայաստան եւ սահմանակից երկիրներ. (համառօտ անտութիւն, գլխաւորապէս ֆիզիքական կազմութեան անտակէտից): Գասընթացքը սկսուում է բնագաւառին մերձաւոր վայրերից:

1. Անդրկովկաս: Մեծ և Փոքր Կովկասեան և Արարատեան շղթաներ: Գլխաւոր աւա-

զաններ: Մերձաւոր ծովեր:

Կուր, Արաքս և Ռիօն գետերի հովիտները: Փոքր Կովկաս. նրա բարձրավանդակները, անցքերը և կիրճերը, հարաւային և հիւսիսային լանջերը: Արագած: Սեանայ լիճ:

Արարատեան շղթայ. նրա մասերի առանձին անունները, հիւսիսային և հարաւային լանջերը. Մասիսներ՝ Մեծ և Փոքր:

Մեծ Կովկասի լեռնաշղթայ, նրա հարաւային և հիւսիսային լանջերը, կիրճերը, անցքերը: Կազբէկ և Էլբրուս:

2. Ռուսաստան: Սահմանները. մերձաւոր ծովերը, գլխաւոր լեռները, գետերը: Բաժանումը ըստ բուսականութեան՝ տունդրա, անտառների, երկրագործական և «ստեպների» գօտիներ: Մայրաքաղաքները և գլխաւոր արդիւնաբերական և առեւտրական կենդրոնները:

3. Ասիական Տաճկաստան: Արեւմտեան Տօրոսի, Արեւելեան Տօրոսի և Զաքրօշի շղթաներ: Կարնոյ և Արաշկերտի բարձրավանդակներ: Արածանիի, Եփրատի և Վանայ լճի աւազաններ: Տիգրիսի վերնագաւառ: Կիլիկիա և Զէյթուն: (Անատօլիական բարձրավանդակ, Միջագետք, Պաղեստինէ, Արաբիա):

4. Պարսկաստան: Ղարաղաղ, Արաքսի աջակողմեան վտակների և Ուրմիոյ լճի աւազանները: (Իրանի բարձրավանդակ: Հարաւային Պարսկաստան):

Հայրենի երկիրն ուսումնասիրելիս աչքի առջ պէտք է ունենալ գլխաւոր մասերի մակերևոյթի կազմութիւնը, կլիմայական պայմանները, բնական հարստութիւնները, գլխաւոր պարապմունքները, ճանապարհները, բնակիչներէ ազգութիւնն ու կրօնը, բնակութեան գլխաւոր կեարձանները և վարչական բաժանումը. անոնցիւնէն ստանալի հետ պէտք է միաժամանակ սալ և հայկական պատմական անունները:

Հայրենիքի տեղը երկրագնդի վերայ

Համառոտ տեսութիւն աշխարհի քոլոր մասերի: Մակերևոյթի կազմութիւնը, գլխաւոր բարձրութիւններն ու հարթութիւնները, ծովերը, ծոցերը, նեղուցները, թերակղզիները, կղզիները, պարանոցները: Կլիման: Բուսականութիւնը և անասնաշատուկ կենդանիները: Ազգաբնակչութիւնը: Քաղաքական բաժանումը:

Ծանօթութիւն: Աւելի մանրամասն անցնել յաւիտենական սառուցի (բեկոսային) և յաւիտենական տաքութեան (անդրադարձային) աշխարհները և համեմատաբար աւելի շատ տեղեկութիւններ տալ Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներէ մասին:

Պատկերներ հայրենիքի անցեալից

Տիգրան Մեծ: Տրդատ և Ս. Լուսաւորիչ: Արշակ Բ. և Ներսէս Մեծ: Ս. Սահակ և Ս. Մեսրոպ (տա-

ների գիւտը): Կրօնական պատերազմները (Վարդանանց և Վահանանց — իրար հետ միացած): Արաբների արշաւանքը և Ռոսիկանութիւնը (Նախիջևանի կոտորածը): Աշոտ Ա.: Աշոտ Ողորմած և Անիի շինութիւնը: Սելջուկների արշաւանքը և Անիի վիճակը: Հայերի գաղթականութիւնները: Ռուբինեան պետութեան սկզբնաւորութիւնը և Լևոն Մեծագործ: Թաթարների արշաւանքը և Լանկութամուր: Շահ-Աբաս: Դաւիթ-բէգ (Ռուսաց միջամտութիւնը Հայոց գործերին): Ռուսները հաստատուելը Կովկասում, հայերի գաղթելը Պարսկաստանից և Տաճկաստանից Ռուսաց բաժինը: Ներսէս Աշտարակեցի: Ռուսահայք, տաճկահայք և պարսկահայք:

## X. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

Կենդանաբանութիւն

Միջավայրը՝ տուն: Մարդու կազմաւածքի արտաքին մասերը (նաև բերանն ու ստամոքսը, աղիքները), սրանց գործառնութիւնները:

Սննեակում՝ շուն\*), կառու, մուկ, ճանճ, սարգ, լու:

Բակում՝ ձի, կով, ոչխար, հաւ, աղուաւ, ճնճղուկ, ծիծեռնակ:

\*) Շան, կառուի նաև ընտելացումը:

Պարտէզում՝ սարեակ, մեղու, բղէզ, գորս  
(տես Գ. տարի.):

### Բուսաբանութիւն

Այս և Գ տարում համառօտ բնախօսա-  
կան տեղեկութիւններ:

Պարտէզում: Խնձորենի, սալորենի...  
վարդ, մեխակ, արեածաղիկ, լոբիա, վարունգ,  
սալ, սիսեռ, բակլայ...

### Հանաբանութիւն

Աւազաքար, աւազ, կաւ, սնդիկ, աղ, քա-  
րածուխ, նաւթ:

Պարտէզի հողը՝ ծագումը, տեսակները:

### Ֆիզիկայ

Ջերմութիւն: Բնակարանի տաքացները, ջեր-  
մութեան բնական ու արհեստական աղբիւրները՝  
արև, վառարան: Ջերմութեան տարածուելը օդի  
և հեղուկ ու հասաստուն մարմինների միջով:  
Ջերմութեամբ մարմինների ընդարձակուելը և  
սեղմուելը, հալուելը, սառչելը: Ջերմաչափ:

Մագնիսականութիւն: Մագնիսի ազդեցու-  
թիւնը երկաթի ու պողպատի վրայ: Մագնիսա-  
կան սլաք, կողմնացոյց, բեւեներ, միջազիծ,  
հակում (ինկլինացիա), խոնարհում (դեկլինացիա):  
Երկրի մագնիսականութիւնը: Ազատ ու կապած  
մագնիսականութիւն: Ջերմութեան ազդեցու-  
թիւնը մագնիսականութեան վրայ: Երկաթի և  
պողպատի մագնիսականութիւնը:

### Քիմիայ

Օդը: Օդի յասկութիւնները. բաղադրիչ մա-  
սերի դասելը (Չուրը գրած բոյսից թթւածին,  
այրումից բորակածին. այս երկու գազերի հա-  
ւաքւելը:)

Ջուրը: Բաղադրիչ մասեր, լուծում և համա-  
դրութիւն (օրինակ. սպիրտ վառելով ու վրան  
սկսակ բռնելով) H սպիրտի և O օդի = H<sub>2</sub>O: Բնա-  
խօսական ու ֆիզիքական երևոյթների վերլու-  
ծութեան ու համադրութեան տարբերութիւն-  
ները:

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

### Կենդանաբանութիւն

Միջավայրը՝ տուն (շարունակութիւն):

Մարդ: Ներքին կազմածքի գլխաւոր օր-  
գանները՝ սիրտ, թոքեր, երակներ, ջղեր, մկան-  
ներ, կմախք և սրանց գործառնութիւնները,  
և մանրամասն ստամոքսի և աղիքների մասին:  
Այս գործարանների առողջապահութեան վերա-  
բերեալ ցուցմունքներ:

Պարտէզում: Կենդանիներ՝ անձրևի որդ, ա-  
փիս (розовая тля), թիթեռ, դեղձանիկ, չղջիկ,  
կապիկ:

### Բուսաբանութիւն

Պարտէզում: Շուշան, սոխ, երակ, սիսեռ,  
գազար, կարտօֆիլ, խաղող, փայտ, ծիրանի,

## Քիմիայ

Ածխածինը: Ածխաթթու (Огнись углерода),  
ածխային թթու (Углекислота), ածխաթթուային  
կիր:

Շէնքի շաղախի զանգուածը: Չհանգած կիրը.  
լուծուելը ջրի մէջ. ջերմութիւն, ածխաթթուի  
զատուելը, աւազի ու քարի հետ միանալու պատ-  
ճառը:

Մոմի, նաւթի, լուցկիի, վառօդի հիմնական  
բաղադրիչ տարրերը:

Ե. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

## Կենդանաբանութիւն

Միջավայրը՝ դաշտ կամ մարգագետին: Ա-  
զանի, կաքաւ, արտուտ, լւր, դաշտամուկ,  
լլուրդ, ոգնի, նապաստակ, ճագար, մորեխ,  
մեղու:

## Բուսաբանութիւն

Միջավայրը դաշտ կամ մարգագետին: Կա-  
կաչ, տերեփուկ (василекъ, centaurea), խտուտ—  
կրոնաբանջար (одуванчикъ), ձնծաղիկ, (երեքնուկ,  
rifolium). մանիշակ, եղինջ:

Գարի, ցորեն, բրինձ, եգիպտացորեն:

Կուլտուրական քոյսեր. վուշ (կաւաւ, բամբակ,  
ծխախոտ, կանեփ, ձիթենի (ձիթապտուղ), լւա-  
ծաղիկ, կնճթենի (сезамъ):

Այս և հետեւեալ տարոււմ աւելի մանրամասն  
բնութագրական տեղեկութիւններ:

Նշենի: Փայտածուխ:

Հողի վարելը, պարարտացնելը, հանգստաց-  
նելը:

## Հանաբանութիւն

Շէնքի համար գործածական տեղական քա-  
րեր 1—2, կրաքար, շէնքի կրի պատրաստելը,  
գաջ (գիպս), կաւիճ, մարմարիոն, աղիւտ:

Գրաֆիտ, ադամանդ, ծծումբ:

## Ֆիզիկայ

Հաստատուն մարմինների հաւասարակշու-  
թիւնը և ծանրութեան պատճառը: Ծանրութիւն  
ու խտութիւն կամ թանձրութիւն (плотность):  
Անկում: Ուղղաձիգը: Թանձրութիւն ու ծանրու-  
թիւն: Լծակներ, կշեռք, քաշ: Հաստատուն, հե-  
ղուկ ու գազակերպ մարմինների թանձրութեան  
հալուելը: Թանձրութեան ու ջերմութեան առնչու-  
թիւնը:

Պարզ ճախարակ, շեղ մակերևոյթ, սեպ,  
պտուտակ՝ իբրև շէնքի համար կարևոր գործիքներ  
— կամ պարզ մեքենաներ:

Շլէքտրականութիւն. հիմնական փորձեր,  
գրական ու բացասական ելէք. լու ու վառ  
հաղորդիչներ. տարածւելը զանազան ձևի իրերի  
վրայ, ելէքարացոյց (նաև ելէքարաչափ): Պարզ  
ելէքարական մեքենայ. սրա վրայ հիմնական  
փորձեր. կայծ, շանթ, շանթարգել:

### Հանքաբանութիւն

Որձաքար горный хрусталь кварцъ, թերթաքար (շիֆեր):

Երկաթ, պղինձ, ցինկ, արծաթ, ոսկի, կապար, անագ, արոյր (պղնձի և անագի խառնուրդ — գեղին պղինձ):

### Ֆիզիկայ

Գալվանականութիւն: Գիւտը. վոլթայան սիւնը. գալվանական հոսանքի ֆիզիքական, քիմիական, բնախօտական ազդեցութիւնները: Գանիէլեան կամ այլ պարզ տարր: Գալվանական հոսանքի ազդեցութիւնը մագնիսի վրայ. գալվանաչափ (համեմատութիւն գալվանականութեան և էլէքտրականութեան). հեռագրական մեքենայի հիմնական մասերը, հեռաձայնը (տելեֆոն):

Հեղուկների հալասարակչողութիւնը: Յայտում, ցայտման հեռաւորութեան կախումը անցքի բարձրութիւնից, ճնշում յատակի վրայ, ճնշում ջրի մէջ գնուած առարկաների վրայ, ճնշում ու թանձրութիւն հեղուկի: Հաղորդակցող անօթներ — հետևանքներ, շատրուանի բարձրութիւնը: Բնակարաններում ջուր բարձրացնելը բնական ու արհեստական ոյժերով:

Գազերի հալասարակչողութիւն: Մթնոլորդի ճնշումը, ճնշման չափը, գինեսհան (լիւեր), սիֆոն, ջրհան ու հրշէջ մեքենաներ պարզ տեսակի. սրանց վերաբերեալ հիմնական փորձերը. բարոմէտրը:

### Քիմիայ

Առանձին տնտեսութեան շրջանից:

Խոհանոցի քիմիայ: Հաց, կաթ, իւղ, մածուց, թան, շաքար, միս, ճարպ, ձու, պատիճաւոր: Մսնդեղէնը, բանջարեղէնը, մրգեղէնը:

Տարրական գիտելիքներ սրանց բաղադրութեան, պատրաստելու և պահելու մասին, նաև աղաջրի և քացախաջրի մէջ, յարդի և աղի մէջ:

Կոնսերւների պատրաստելը: Փթելու, ժանգոտելու, փաստելու (երկաթի թթւութից) պատճառները:

Կտուհատի ու ձիթապղի, կնձիթի ձէթեր պատրաստելը, պահելը:

Մեղրամոմը

### 2. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

#### Կենդանաբանութիւն

Մարդակազմութիւն եւ ընտելութիւն: Լրացնել ներքին գործարանների կազմն ու բնախօսութիւնը: Նոր՝ ուղեղ, ողնուղեղ, գեղձեր, մազեր, ճարպ, մանրամասն արեան շրջանառութիւնը, շնչառութիւն:

Միջավայրն անտառ:

Ծառակուտկուտ, կաշաղակ, կկու, սոխակ, սկիւռ, արջ, գայլ, աղէս, կեղևակեր բզեզ (սյ-ծօճԵ — hilesinus). լուսատանիկ: Շերամ:

Կամ միջավայրը լին:

Բադ, ծիծեռնակ, արագիլ, կանաչ գորտ  
(տ. Գ. տարի), ջրային սալամանդր, ջրաբզեզ,  
մոծակ, ձուկ, ջրային խղունջ, ազրուկ:

Կամ միջավայրը գետ, առու:

Սագ, ճայ (чайка—Möve), ծիծեռնակ, խա-  
ղատանիկ (трясогузка—motacilla), ձուկ, խեցգե-  
տին, օձաձուկ (угорь, Aal muraena): Կապիկը և  
չղջիկը:

Ամփոփ համեմատական գաղափար տալ կեն-  
դանիների մասին:

### Բուսաբանութիւն

Միջավայրը անտառ:

Կաղնի, ընկուզենի, տխլի, եղենի, բարդի,  
մասսենի, մամուռ, սունկ: Իւղածողիկ, անմո-  
ռուկ, պտեր (напоротник):

Կուլտուրական բոյսեր. ճակնգեղ, շաքարեղէզ,  
կակաօ, կիտրոն, նարինջ, թէյ, սուրճ, թիթենի:

Կամ միջավայրը լիճ:

Ուռենի, ջրասէր կաղնի, գարնանածաղիկ  
(примула Primb.), եղէզ, անմոռուկ—մկնականջ  
(Незабудка—Myosotis), ջրային հարսնուկ—գորտ-  
նուկ (Ranunculus), ջրաշուշան (Iris) կամ թրա-  
շուշան, ջրասույ:

Կամ միջավայրը գետ, առու:

Ուռենի, ջրասէր կաղնի, եղէզ, անմոռուկ,  
գարնանածաղիկ:

Ամփոփ համեմատական գաղափար բոյսերի  
մասին:

### Հանաբանութիւն

Նախորդ պրակում նշանակուած միջավայ-  
րերի հողը կամ եզերքն ու յատակը (աւազ, կաւ,  
տիղմ):

Բրոնդ (անագապղինձ), ծծմբախառն կապար,  
ծծմբախառն պղինձ, ծծմբախառն երկաթ: Մը-  
կնդեղ (мышьяк), դմբուխա, պերոզակ (փիրու-  
զա): Մարզանեց:

Ջուրը և նրա փոփոխութիւնների քիմիական  
ու մեքենական ազդեցութիւնը օրգանաւոր և  
անօրգան աշխարհների վրայ:

Ամփոփ համեմատական գաղափար հանքերի  
մասին:

### Ֆիզիկայ

Շոգեշարժ մեքենայի էական մասերը՝ գլան,  
խցանի ձողի միացման առանձնայատկութիւնը  
անիւլի հետ, գէթ մոզէլի միջոցով ցոյց տալ այս  
շարժումը իւր էական մասերով:

Գարվանոսպաստիկային վերաբերեալ մի պարզ  
փորձ:

Ժամացոյցի էական մասերն ու դործողու-  
թիւնը:

Կուլտուրական աշխատութեան մտաւոր կողմը:

Լոյս: Տարածման ուղղութիւն: Հետեանքներ՝  
ատուեր, թերատուեր, ստուերի մեծանալն ու փոք-  
րանալը, պատկերի (ստուերի) գլխիվայր դիրքը:  
Լուսաւորութեան չափի կախումը առարկայի

դիրքից ու հեռաւորութիւնից: Անկման ու ան-  
զրազարձման անկիւնները, հայելի, ջրի մակե-  
րևոյթը հայելի: Ճառագայթների բեկումը մի  
միջավայրից միւսն անցնելիս: Ուռուցիկ ու զո-  
գաւոր ապակիներ: Ակնոց, պարզ խոշորացոյց  
(лупа), ուռուցիկ ապակու ֆոկուսը, այրման  
փորձը: Արևի ճառագայթի լուծումը, համադրու-  
թիւնը փորձով ներկայացնել:

Չայն: Առաջնապը զանազան առարկաների  
միջոցով, սնօսը օդի և դատարկ տարածութեան  
մէջ: Արագութիւն (համեմատութիւն լոյսի հետ),  
արձագանգ: Չայնի 3 յատկութիւնները՝ բարձրու-  
թիւն, ոյժ, գոյն: Փողածէ և լարաւոր երաժշտու-  
կան գործիքներ: Չայնի հիմնական 7 տոները:

Քիմիայ

Ծծմբաթթու և աղաթթու: Սրանց ազդե-  
ցութիւնը զանազան նիւթերի և մասնաւորա-  
պէս ամանեղէնների վրայ: Ֆարֆօրի, էմալի,  
կաւի և այլ նմանօրինակ նիւթերի ազատ մնալն  
այդ ներգործութիւնից: Քիմիական աղերի ծա-  
զումը:

Շաքարի, ասեղի, թղթի, գրչի, թանաքի,  
ապակու, օսլայի պատրաստութիւնը և օճառի,  
լուացքի քիմիական պրոցէսը: Վերջինս մանրա-  
մասն օրիորդների համար:

Օրիորդների համար նաև՝ բնակարանի կարգ  
ու սարքը, պահպանութիւնը, կահկարասիքի մաք-  
րելն ու պահպանելը, մասնաւորապէս բրդեղէնի

պահպանութիւնը: Թղթեղէնի, կտորեղէնի սպի-  
տակացնելու սկզբունքը:

XI. ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Անկիւնաւոր պրիզմայական ձևերից խո-  
րանարդը. ա) նրա տարրերը՝ մակերևոյթներ,  
կողեր, արտաքին ու ներքին անկիւններ 2 և 3  
մակերևոյթներից. բ) գաղափարներ տեղերի մա-  
սին՝ առջև, ետև, ձախ, աջ և աջն. գ) գաղա-  
փարներ ուղղութեանց մասին՝ հորիզոնական,  
ուղղահայեաց, զուգահեռական և այլն. դ) ան-  
կիւնը և նրա տարրերը. ե) տարածութիւնները.  
գննութիւն և գործադրութիւն երկարութեան  
չափերի: Զառակուսին՝ իբրև խորանարդի մա-  
կերևոյթներից մին. ա) գննում՝ ձև, կողմեր,  
մակերևոյթ, բովանդակութիւն. մակերևոյթի չա-  
փելը. բ) յօրինուածք (կոնստրուկցիա):

Գործադրութեան համար պէտք են հետևեալ  
գործիքները. ուղղորդը (ուղղաձիգը գտնելու հա-  
մար), զուգահեռական դիրքով միացած զոյգ  
քանոնները (զուգահեռականներ քաշելու համար),  
կարկինը, չափագիծը (մասշտաբը) և ուղղանկիւն  
եռանկիւնին:

Գ. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Զառակուսի պրիզման՝ իբրև խորանարդից  
կազմուած մարմին: Զննութիւն՝ ինչպէս Գ. տա-

բում: Քառանիստը կամ ուղղանկիւն քառանկիւնին. ա) զնուութիւն ինչպէս վերեր. բ) յօրինուածք (ինչպէս վերեր). գ) ծաւալի գրտները: Ուղղանկիւնի եւ եռանկիւնի պրիզմաները՝ անցնել քառակուսի պրիզմայի հետ բաղդատական եղանակով: Բառանկիւնի մակերեւոյթի չափերը: Եռանկիւնին՝ տեսակները, յօրինուածքը, չափերը: Բազմակողմանի պրիզման: Բազմանկիւնին: Եեղանկիւն պարալելոգրամը, չափերը: Տրապէզը: Գլանը. համեմատութիւն պրիզմաների հետ: Երջանը և նրա մասերը, 360<sup>0</sup>, յօրինուածք, ամբողջ շրջանի և նրա մասերի չափերը (շառաւիղ, տրամագիծ, շրջագիծ, մակերեւոյթ, կիսաշրջան, հատած ու հատուած): Անցած մարմինների ծաւալների չափերը՝ խորանարդը միութեան չափ ընդունելով:

Ե. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Բրզածներ: Քառանկիւնի և եռանկիւնի բուրգեր՝ համեմատութեամբ. ա) ըմբռնում և համեմատում բաղադրիչ տարրերի ու դիրքերի. բ) բրզածն մարմինների երկարութեան, մակերեւոյթների և ծաւալի չափերը: (Ծաւալները չափում են թիթեղեայ պրիզմաների և բուրգերի մէջ լցրած ջրով): Հատած բուրգ՝ նկարագրել առանց չափելու:

Զ. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Կոն եւ հատած կոն, վերջինս առանց չափելու: Զուածիրն ու ձուածնը՝ իբրև գլանի և կոնի հատածներ, սրանց գծագրելը թելով ու կարկինով: (Չափելը շրջանի ու շրջագծի հիման վրայ): Գունդը. ա) նրա տարրերի համեմատական չափերը. բ. մակերեւոյթի և ծաւալի չափերը՝ հիմնուելով եռանկեան, շրջանի և կոնի վրայ:

XII. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Դասարանցման լեզուն ռուսերէն է):

Ե. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Ռուսաց կայսրութիւն

Տարածութիւնը, սահմանները և նրանց առևտրական ու ռազմական նշանակութիւնը: Կայսրութեան մասերը: Եւրոպական և Ասիական Ռուսաստան: Կովկաս:

ա. Անդրկովկաս

Ընդհանուր տեսութիւն: Երկրի տարածութիւնը, ցամաքային և ծովային սահմանները: Մակերեւոյթի կազմութիւնը: Լճերն ու գետերը: Սև և Կասպից ծովերը: Ազգաբնակչութիւնը:

Յատուկ տեսութիւն: Մեծ ու Փոքր Կովկաս: Արարատեան շղթայ: Այս շղթաների կազմութիւնը՝ ձևական և երկրաբանական, աշխարհա-

գրական նշանակութիւնը. մասերը, գագաթները, լանջերի բնաւորութիւնը, մասնաւոր հովիտներն և սարահարթերը, անցքերն ու կիրճերը. հանքային հարստութիւնները. բուսական և կենդանական աշխարհը:— Առանձին գետերի աւազաններն իրենց մասերով: Կասպից ծովի աւազանները՝ Կուրի և Արաքսի աւազանները: Այս աւազանների աշխարհագրական նկարագրութիւնը, մասերը, կողմնակի հովիտներն ու փոքր աւազանները, բնական հարստութիւնները, բնակիչների պարապմունքը. ճանապարհները (երկաթուղիներն ու գլխաւոր խճուղիները): Վարչական բաժանումը: Գլխաւոր վարչական և առևտրական կենտրոնները: Նշանաւոր պատմական վայրերը:

#### բ. Եւրոպական եւ Ասիական Ռուսաստան

Մակերևոյթի կազմութիւնը, գլխաւոր լեռները, բարձրութիւնները և ցածրութիւնները: Լճերն ու գետերը: Կլիման: Բուսականութիւնը և հանքային հարստութիւնները. Գլխաւոր ջրային և երկաթուղային ճանապարհները (Մեծ Սիբիրական գիծ, Վլադիկավկազեան գիծ): Ազգաբնակչութիւնը: Քաղաքական կազմակերպութիւնը: Արդիւնաբերական և արդիւնագործական շրջանները: Արտահանութիւնն և ներմուծումը (մանաւանդ Անդրկովկասի վերաբերմամբ): Նշանաւոր քաղաքները:

### XIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

#### Ե. ՏՍՐԻ (շաբաթական 1 դաս)

##### 1. Պարսկաստան

Սահմանները, տարածութիւնը, ազգաբնակչութիւնը, քաղաքական կազմակերպութիւնը և բաժանումը:

ա. Հիւսիս-արևմտեան Պարսկաստան. գրեթէ նոյնպիսի մանրամասնութիւններով և սիստեմով, որպէս Անդրկովկասը (տ. Ռուսաստանի աշխարհագրութիւնը): Արաքսի աջակողմեան վտակների աւազանը: Ռւրմիսյ աւազանը: Ղարաղազ:

բ. Իրան և Հարաւային Պարսկաստան:— Ժողովրդի անասական և քաղաքակրթական վիճակը: Գլխաւոր ճանապարհները: Նշանաւոր քաղաքները:

##### 2. Տաճկաստան

Սահմանները, տարածութիւնը, ազգաբնակչութիւնը, քաղաքական կազմակերպութիւնը և բաժանումը:

Հայկական լեռնաշխարհ. գրեթէ նոյնպիսի մանրամասնութիւններով և սիստեմով, որպէս և Անդրկովկասը (տ. Ռուս. աշխարհ.): Գլխաւոր լեռները և նրանց մասերը: Արածանիի, Վանայ լճի, Եփրատի և Տիգրիսի աւազանները: Դերսիմ. Սասուն: Զէյթուն:

Միջագետք և Արաբիա:

### 3. Միջերկրական ծովի շուրջը գտնուող երկիրները

Միջերկրական ծովի տարածութիւնը և խորութիւնը: Նրա յատակի կազմութիւնը, մասերը, բուսական և կենդանական աշխարհը, ազդեցութիւնը կլիմայի վրա: Միջերկրական ծովի նշանակութիւնը:

Տաճկաստան (Պաղեստին, Կիլիկիա, Փոքր Ասիա, Եւրոպական Տաճկաստան): Բալկանեան թերակղզու միւս պետութիւնները: Չերնոգորիա, Սերբիա, Բուլղարիա, Ռումինիա, Յունաստան: Իտալիա: Ֆրանսիա (առաւելապէս հարաւային): Սլովենիա: Մարոկկո. Ալժիր. Տունիս. Եգիպտոս:

### 2. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

#### 1. Ասլանիսեան ովկիանոսի շուրջը գտնուող երկիրները

Ատլանտեան ովկիանոսի տարածութիւնը և մասերը, խորութիւնը և յատակի կազմութիւնը, մակընթացութիւնը և տեղատուութիւնը, հոսանքները: Բուսական և կենդանական աշխարհը: Ազդեցութիւնը կլիմայի վրա: Նշանակութիւնը:

Պորտուգալիա. Ֆրանսիա (առաւելապէս հիւսիսային). Բելգիա և Հոլլանդիա. Իսպանիա. Գերմանիա. Շվեյցարիա. Աւստրո-Հունգարիա. Շվեդիա. Նորվեգիա. Անգլիա. Արևմտեան և Կենտրոնական Աֆրիկա. Անգլիական կալուածքները Հիւսիսային

Ամերիկայում. Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները. Մեքսիկա. Միջին Ամերիկա. Հարաւային Ամերիկայի արևելեան պետութիւնները:

#### 2. Մեծ կամ Խաղաղ ովկիանոսի շուրջը գտնուող երկիրները

Խաղաղ ովկիանոսի տարածութիւնը և մասերը, խորութիւնը և յատակի կազմութիւնը, մակընթացութիւնը և տեղատուութիւնը, հոսանքները, ազդեցութիւնը կլիմայի վրա, նշանակութիւնը:

Հարաւային Ամերիկայի արևմտեան պետութիւնները: Ճապոն: Չինաստան: Հնդկաչին: Ասիական կղզիները: Աւստրալիա և Ովկիանիա:

#### 3. Հնդկական ովկիանոսի շուրջը գտնուող երկիրները

Հնդկական ովկիանոսի տարածութիւնը և մասերը, խորութիւնը և յատակի կազմութիւնը, մակընթացութիւնը և տեղատուութիւնը, հոսանքները, բուսական և կենդանական աշխարհը, ազդեցութիւնը կլիմայի վրա, նշանակութիւնը:

Հնդկաստան: Աֆղանիստան: Բելուջիստան: (Հարաւային Պարսկաստան): Արաբիա: Արևելեան Աֆրիկայի երկիրները:

Ծանօթութիւն. Ամեն մի առանձին պետութեան աշխարհագրութիւնը անցնելիս պիտի հետևել միատեսակ նկարագրական ծրագրի, այն է՝

1. աշխարհագրական զիրքը. 2. սահմանները.

3. լեռնագրութիւնը. 4. ջրերը. 5. կլիման. 6. բուսական և կենդանական աշխարհը. 7. երկրի քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական վիճակը. 8. բնակիչների ազգագրական բնորոշումը: Նոր աշխարհամասի աշխարհագրութեանը զիմեխիս՝ պէտք է կրկնել IV տարում Հայրենագիտութեան դասընթացքում սովորած ընդհանուր տեսութիւնները:

XIV. ՌՈՒՍԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Դասաւանդման լեզուն ռուսերէն է):

Ե. ՏՅՐԻ (շաբաթական 1 դաս)

Ռ՞րտեղից և ե՞րբ են եկել ռուսական սլաւոնները. նրանց նիստ ու կացը:

Վարեագների հրաւիրուելը. Ռիւրիկ:

Ռուսների մկրտութիւնը. Ս. Վլադիմիր.

Սլաւոնական գիր:

(Եարօւլաւ Իմաստուն. «Русская правда»):

Ռուսաց ներքին կեանքը XI դարի միջում. «կնեագ», «գրութիւն», գիւղացիութիւն, հողերականութիւն և վանականութեան սկզբնաւորութիւնը: «Բողատիրներ»:

Ի՞նչ է ուղեւորական սխտեմը: Ուղեւորական խռովութիւններ: Մեծ-իշխանական գահի փոխազրութիւնը Կիեւից Վլադիմիր Կլեագմայի վրա: Թաթարների արշաւանքը. Բաթու. Ռսկէ

Օրդու. Ռուսաց իշխաններ կախումը Սարայի խաներից:

Իօան-Կալիտա՝ ռուսաց երկրի առաջին հաւաքիչ. Մոսկուայի բարձրանալը:

Դիմիտրի Դոնսկոյ և Կուլիկովոյի ճակատամարտը:

Իօան III. գրեթէ բոլոր ուղեւորների միացումը Մոսկուային. թաթարական լծի թօթափումը. ամուսնութիւնը Սոֆիա Պալէոլոգի հետ և մերձեցումը Արևմտեան Եւրոպայի հետ. Մոսկվայի մեծ իշխանների բարք ու վարքի փոփոխութիւնը:

Ռուսաց ազնուականութեան ծագումը. գիւղացիների ու քաղաքացիների գրութիւնը: Վանքեր: Թաթարական լծի ազդեցութիւնը: Կազակներ:

Իօան IV Ահարկու. նրա թագաւորութեան 3 շրջանները: Կազանի, Հաշտարխանի և Սիբիրի միացումը: Օպրիչնիստ:

Վերջին Ռիւրիկովիչը. գիւղացիների ճորտացումը. պատրիարքութեան հաստատութիւնը: Մինին և Պոժարսկի:

Առաջին Ռոմանովի ընտրութիւնը. Միխայիլ Ֆեոդորովիչ և պատրիարք Ֆիլարէտ: Լեհացիների վերաբերմունքը դէպի ռուսադաւանները: Մալոռոսների ապստամբութիւնը և Մալոռոսիայի միացումը Մոսկուայի հետ: Պատրիարք Նիկոն և հերձուածը «ռասկոլ»:

## 2. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Պետրոս Մեծ. մանկութիւնը, արտասահմանեան ճանապարհորդութիւնը. Շուեդական պատերազմը (Պոլտաւայի ճակատամարտը). Պարսկական արշաւանքը և Ղարաբաղի մեղիքները ու Վրաստանի հետ ունեցած յարաբերութիւնները: Պետրոս Մեծի ներքին վերանորոգութիւնները և նրանց նշանակութիւնը:

Կատարինէ II Մեծ. ուսաց պետութեան սահմանների ընդարձակուելը. (հարաւային երկիրների նուաճումը և Ղրիմի խանութեան վերացումը. Լեհաստանի բաժանումը): Բարձր դասակարգի և զիւզացիների դրութիւնը այս թագաւորութեան ժամանակ: Պուզաշովի սալըստամբութիւնը: Կոլւ Կովկասեան լեռնցիների դէմ և Կովկասեան Զինուորական Գիծ: Հայերի և վրացիների հետ ունեցած յարաբերութիւնները:

Վրաստանի դրութիւնը վերջին վրացի թագաւորների ժամանակ: Վրաստանի և Ղարաբաղի միացումը: Ալէքսանդր I և Հայրենական պատերազմը. Ֆինլանդիայի և Լեհաստանի կարգաւորութիւնը: Ռուսաց կառավարիչները Կովկասում:

Նիկոլայ I: Պատերազմներ Պարսկաստանի և Տաճկաստանի հետ: Վորոնյովի գործունէութիւնը Կովկասում: Ղրիմի պատերազմը:

Ալէքսանդր II. Պարիզի դաշնագրութիւնը: Շամիլի գերութիւնը և կովկասեան պատերազմների վախճանը. Ճորաութեան վերացումը: Քաղաքային և գեմատվային կանոնադրութիւնները: Դատաստանական վերանորոգութիւն: Զինուորագրութիւնը: Հաղորդակցութեան ճանապարհները (երկաթուղիները Կովկասում): Ռուսաց փոխարքաները Կովկասում: Պատերազմ Տաճկաստանի հետ և Բերլինի վեհաժողովը:

Ալէքսանդր III.

Նիկոլայ II.

## XV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

### Ե. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ պատմութիւն

Նախապատմական մարդու մասին III-րդ տարում Հայրենագիտութեան դասընթացքում արուած տեղեկութիւնների կրկնութիւն, ամփոփում և ընդարձակում:

Եզրագիտութիւն: Երկիրն ու բնակիչները: Եզրագիտութիւնը քաղաքական պատմութիւնը (շառ համառոտ): Արձանները: Գիրը: Կրօնն ու սովորոյթները (հազուստ, զէնք և այլն):

Ըստդէս եւ Ասորեստան: Երկիրն ու բնակիչները: Բաբելոն և Նինուէ: Պեղումներ: Գիր: Հին ականությունները մարդու ստեղծագործություն, ջրհեղեղի և Գիլգամէշի մասին: Քաղաքայի և Ասորեստանի քաղաքական պատմությունը (շատ համառօտ): Ճարտարապետությունը, պարսպամուկները, արհեստները և կրօնը:

Մարաստան եւ Պարսկաստան: Երկիրն ու բնակիչները: Համառօտ քաղաքական պատմությունը՝ Կիւրոս, Դարեհ Վշտասպեան և Դարեհ Կողմանոս. Պարսից պետության կործանումը: Զրադաշտական կրօնը: Կրթությունը և սովորոյթները:

Փիւնիկեցիք: Երկիրն ու բնակիչները: Գաղթականությունները (Կարթագէն). փիւնիկեցոց նաւաշինությունը, գիւտերը, այբուբենը, առևտուրը: Տիւրոսի և Կարթագէնի անկումը:

Յունաստան: Քաղաքները («պոլիս»), գաղթականությունները: Կրօնը, ազգային տօնախմբությունները, պատգամախօսները: Սպարտա և Լիկուրգոս: Աթէնք և Սոկրոն (յունական սովորոյթները): Պերիկլէս: Ալէքսանդր Մակեդոնացի: Սելևկեաններ: Անտիոքոս Մեծ: Արշակունիներ:

Հռոմ: Երկիրն ու բնակիչները: Ծերակոյտ և ազգային ժողով: Դասակարգերի կռիւ: Հանսիբալ և Սիլիպիոն Ա. ֆրիկացի: Յուլիոս Կեսար և եռապեաններ: Օգոստոս: Ներոն: Սարկուսթիւն, գլադիատորները: Զօրքը և Հռոմէական խաղաղությունը: Քրիստոնէության տարածուելը հռո-

մէական կայսրութեան մէջ: Հալածանքները: Վանական կեանքի սկզբնաւորութիւնը: Գիովղետիանոս և Կոստանդին Մեծ: Քրիստոնէության յաղթանակը: (Նիկիոյ ժողովը): Կայսրութեան երկու մասի բաժանուելը: Արևմտեան կայսրութեան անկումը:

Արշակունիները Պարսկաստանում: Նրանց պետության սահմանները և կազմակերպությունը: Կռիւները հռոմայեցոց հետ Հայաստանի և Միջագետքի համար: Մասանեանները: Շապուհ Բ.: Մասանեան պետության անկումը: Պարսկական վիպասանությունները (Շահ-Նամէ):

Գերմանացիք: Նրանց երկիրը: Սովորոյթները: Հոների արշաւանքը և Ատիլա: Գերմանացիք հռոմէական հողի վրայ: Քրիստոնէության տարածուելը գերմանացոց մէջ: Նոր ազգեր՝ ուսմանացիք, գերմանացիք և սլաւոններ: Կարլոս Մեծ: Աւատականություն, աւատական սովորոյթները: Պապ և կայսր: Կրթություն: Առևտուր: Ճարտարապետություն (գոթական):

Բիւզանդիոն: Բիւզանդական պալատը: Կայսրութեան կազմակերպությունը: Գրադարաններ: Առևտուր: Տիեզերական ժողովներ: Ճարտարապետություն: Քրիստոնէության տարածուելը սլաւոնների մէջ: Բիւզանդացոց յարաբերությունները հայերի հետ և ազդեցությունը հարևան ազգերի վրայ:

Արաբներ: Նրանց երկիրն ու սովորոյթները: Քաարէ: Մահմէտ և իսլամություն: Արաբական

պետութեան սահմանները ընդարձակուելը: Հասան  
և Հուսէին: Խալիֆայութիւններ (Բաղդադ և Կոր-  
դովա): Արաբները վերաբերմունքը դէպի նուա-  
ճուած ազգութիւնները: Արաբական պալատը:  
Երկրագործութիւնը, արհեստները, առևտուրը:  
Քրիստոնէութիւնները և գեղարուեստը (ճարտարապե-  
տութիւնը): Արաբներէ քաղաքակրթութեան ազ-  
դեցութիւնը ուրիշ ազգերէ վրայ:

### Հայոց պատմութիւն

Ծանօթութիւն: Փակագծի մէջ առածները  
պատմական երևոյթների կապը պահպանելու հա-  
մար է, հետևապէս պէտք է անցնել շատ համառօտ:

Հայաստանը հայերի երևալուց առաջ:  
Սեպագիր արձանագրութիւններ: Խալիֆեր: Ու-  
րարդացոց թագաւորութեան ուժեղանալն և ըն-  
դարձակուելը: Վանի շինութիւնը: Ասորեստանի  
ազդեցութիւնը:

Հնգերոպացոց գաղթականութիւնը: Կիմ-  
մերների արշաւանքը: Ուրարդի և Ասորեստանի  
պետութիւնների անկումը: Հայերի երևալը և  
հաստատուելը խալիֆերի երկրում: Խալիֆերի խառ-  
նուելը հայերի հետ:

Պարսից տիրապետութեան հաստատուելը  
Հայաստանում: Տիգրան և Կիւրոս (ըստ Քսենո-  
փոնի). Հայերի և Կորդուացիների յարաբերու-  
թիւնները. պարսկական ամրոցները Հայաստա-  
նում: Հայաստանը պարսից սատրապութիւն:  
Պարսկական լեզուի և զրազաշտական կրօնի տա-

րածուելը Հայաստանում: Հայոց գիւղը ըստ  
Քսենոփոնի, առևտուրը ըստ Հերոդոտի:

(Պարսից պետութեան կործանումը Ալեքսանդր  
Մակեդոնացու ձեռով: Սելևկեան պետութեան  
հաստատուելը: Հայերի յարաբերութիւնը Սելև-  
կեանների հետ: Արտաշիաս և Չարիագրէս: Հա-  
յաստանը երկու թագաւորութիւն):

Տիգրան Մեծը միացնում է այդ թագաւո-  
րութիւնները և զրաւում հարեան երկիրները:  
Կռիւ Հռոմայեցոց հետ: Ժողովրդի սէրը դէպի  
ազգային հեթանոսական աստուածները, Արտա-  
շատի դաշնագրութիւնը:

(Արտաշիասի սերնդի սպանումը: Հռոմայե-  
ցիների փորձերը հարեան երկիրների հարստու-  
թիւններից թագաւոր նստեցնելու Հայաստա-  
նում): Տրդատ Պարթև. Տրդատի ճանապարհոր-  
դութիւնը Հռոմ («Ոսկէ օր»):

(Հռոմայեցոց և պարսից կռիւները սահմանի  
համար: Հայաստանը պարսից նահանգ (Սուրովի  
սպանութիւնը):)

Հայոց հեթանոսական կրօնը: Աստուածու-  
թիւնները: Ոգիներ: Պաշտամանց տեղեր: Քրմա-  
կան դասակարգ:

Քրիստոնէութեան տարածուելը Հայաստա-  
նում: Ասորի քրիստոնեաների ազդեցութիւնը:  
Ս. Տրդատ և ս. Լուսաւորիչ. քրիստոնէութիւնը՝  
պաշտօնական կրօն Հայաստանում: Եկեղեցու  
կազմակերպութիւնը: Յարաբերութիւնը Կեսա-  
րիայի եկեղեցու և ընդհանրական եկեղեցու հետ:

Կաթողիկոսութիւն: Կաթողիկոսների յարաբերու-  
թիւնը թագաւորի և նախարարներին հետ: Եկեղե-  
ցին Ներսէս Մեծի օրով: Ինքնագլխութիւն:  
Կաթողիկոսական աթոռանիստը: Եկեղեցական  
կալուածքները: Քրիստոնէութեան ազդեցութիւնը  
հայերի վրայ:

Արշակ Բ. և Պապ. ընդհարումներ կաթողի-  
կոսութեան և նախարարների հետ:

Նախարարական կազմակերպութիւնը: Նա-  
խարարների ծագումը: Տանուտէր և սեպուհ:  
Նախարարները յարաբերութիւնը թագաւորի և  
ուրիշ նախարարների հետ: Պաշտօններ զօրքի  
մէջ և պալատում: Յարաբերութիւնը ժողովրդի  
հետ (քաղաքացիք և գիւղացիք), որսորդութիւն  
և սլաւոներագմ (զօրքի կազմութիւնը, կռուի սո-  
վորական եղանակը): Նախարարական ամրոցները:

(Հայաստանի բաժանուելը յոյների և պար-  
սիկների միջև: Արշակունիների անկումը: Արաա-  
շէս վերջինը: Մարգարանութիւն):

Գրերի գիւտը: Թարգմանիչներ: Ի՞նչ լեզուից  
էին թարգմանում եկեղեցական գրքերը: Թարգ-  
մանիչները և նրանց աշակերտները: Նրանց վե-  
րաբերմունքը դէպի հայկական կեանքի զանազան  
երևոյթիները և դէպի թագաւորութեան անկումը  
մասնաւորապէս:

Կրօնական պատերազմներ. կրօնական, տըն-  
տեսական և քաղաքական պատճառները. Աւա-  
րայրի ճակատամարտը և նրա անմիջական հե-  
տևանքները: Պատերազմների երկրորդ շրջանը:

(Վահանանք): Նուարասակի դաշնագրութիւնը: Հայ  
մարգարաններ:

Հայոց եկեղեցու բաժանումը միւս եկեղե-  
ցիներից: Հայկական տօմարի հաստատումը:  
Հայոց եկեղեցու լիակատար ինքնօրինութիւնը:  
Յարաբերութիւն վրաց և աղուանից եկեղեցի-  
ների հետ:

Արաբների արշաւանքը: Գուլիսի Ոստիկա-  
նութիւնը, Հայաստանի քաղաքական կազմակեր-  
պութիւնը (իշխանաց իշխան, սպարապետ, նա-  
խարարներ): Ոստիկանների վերաբերմունքը դէպի  
հայոց եկեղեցին: Մամիկոնեանների և Բագրա-  
տունիների բռնած զիրքը դէպի ոստիկանները:  
Վրաց եկեղեցու բաժանուելը հայոց եկեղեցուց:

Բագրատունեաց հարստութիւնը. բարձրա-  
նալու պատճառները: Աշոտ Ա. (Մմբատի ընդ-  
հարումները Ատրպատականի ոստիկանների հետ  
և մահը): Աշոտ Երկաթ. յարաբերութիւնները  
յոյների հետ: Հայաստանը՝ բազմաթիւ թագա-  
ւորութիւններ: Աշոտ Ողորմած: Անի քաղաք:  
Արաբների ազդեցութիւնը հայոց քաղաքակրթու-  
թեան վրայ: Առևտուր և առևտրական ճանա-  
պարհներ:

2. ՏԱՐԻ (շաբաթական 3 դաս)

Ընդհանուր պատմութիւն

Թուրք — Սելջուկներ: Բաղդադի խալիֆայու-  
թեան անկումը: Տուրքիլ-Բէկ և Ալփասլան:

Սելջուկեան սուլթանութիւններ: Երուսաղէմը  
թուրքերի ձեռքում: Խաչակրաց արշաւանքները:  
Արևելեան և արևմտեան եկեղեցիների բաժա-  
նումը: Հայազգի կայսրները Բիւզանդիոնում:  
Թաթարների արշաւանքը և Կ. Պօլսի անկումը:

Վրաստան: Երկիրն ու բնակիչները: Քրիս-  
տոնէութեան տարածուելը Վրաստանում: Վրաց  
եկեղեցու բաժանուելը հայոց եկեղեցուց: Վրաս-  
տանի բարձրանալը Թամար թագուհու օրով:  
Վրաստանի վիճակը անմիջապէս թաթարների  
արշաւանքից յետոյ:

Անգլիա: Ազատութեանց Մեծ Հրովարտակը:  
Պառլամենտ: Միապետութեան զարգացումը  
Փրանսիայում:

Գիւտերի դար: Կողմնացոյց: Պորտուգալացի-  
ների ճանապարհորդութիւնները, Վասկո-դէ-  
Գամա: Սպանիացիների ճանապարհորդութիւննե-  
րը, Քրիստափոր Կոլումբ: Ամերիկայի բացման  
նշանակութիւնը (գաղթավայրեր, նեգրեր, նոր  
ապրանքներ): Տպագրութեան գիւտը, Գուտեն-  
բերգ: Վառօդ և հրագէշներ: Նոր ժամանակ-  
ների զօրքը: Ասպետութեան անկումը:

Գեղարուեստների և Գիտութիւնների վերա-  
ծնութիւնը: Իտալական քաղաքները, նրանց ա-  
ռևտրական կապերը և կառավարութիւնը: Բիւ-  
զանդական գիտնականների տեղափոխուելը Իտա-  
լիա: Միքէլ Անջէլօ: Ռաֆայէլ: Կոպերնիկոս:  
Գալիլէ:

Կրօնական վերանորոգութիւն: Լութեր և Կալ-

վին: Բողոքականութեան տարածուելը Եւրոպա-  
յում: Իզնատիոս Լոյոլա և կաթոլիկական ռէակցիա:  
Ինկվիզիցիա: Երեսնամեայ պատերազմը: Յիսու-  
սեանների քարոզչական գործնէութիւնը Փոքր-  
Ասիայում և Հայաստանում:

Անգլիկանութեան հաստատուելը Անգլիայում:  
Կռիւ թագաւորների և ժողովրդի մէջ: 1688 թ.  
յեղափոխութիւնը և «Իրաւունքների Հրովար-  
տակը»: Եւրոպական գաղութները գանազան  
երկրներում: Հիւսիսային Ամերիկայի ապստամ-  
բութիւնը և Միացեալ Նահանգների հիմնարկու-  
թիւնը: Վաշինգտոն և Ֆրանկլին:

Միասնեծանութիւնը Փրանսիայում: Լուդովի-  
կոս XIV. Վերսալը և պալատական սովորութիւն-  
ները: Ժողովրդի դրութիւնը: Ֆրանսիան XVIII  
դարի երկրորդ կիսում: Ֆրանսիական Մեծ Յե-  
ղափոխութիւնը 1789 թ.

Նապոլէոն Բոնապարտ. նրա արշաւանքները:  
Նապոլէոնը կայսր, նրա արշաւանքը Ռուսաստան  
և անկումը. Վիեննայի վեհաժողովը: Նապոլէոնի  
գործնէութեան նշանակութիւնը: Սահմանա-  
դրական կառավարութեան հաստատուելը Ֆրան-  
սիայում և պետական այս ձևի տարածուելը  
Եւրոպայում:

Պրուսիա: Յրիգրիխ մեծ: Պրուսիան սահմա-  
նագրական միապետութիւն: Նապոլէոն III: Գա-  
րիբալդի և Իտալիայի ազատութիւնը: Ֆրանս-  
պրուսական պատերազմը: Գերմանիայի միու-  
թիւնը: Երրորդ հանրապետութիւնը Ֆրանսիայում:

Տաճկաստան: Սուլէյման Փառահեղ: Տաճկաստանի կառավարութեան ձեռք: Վերաբերմունքը դէպի քրիստոնէականները: Ենիշերիներ: Յունաստանի ապստամբութիւնը և ազատութիւնը: Ներքին վերանորոգութիւնների շրջանը Տաճկաստանում: Ենիշերիների զօրքի վերացումը. Թանգիմաթ: Սլաւոնական ազգերի ապստամբութիւնները և սլաւոնական պետութիւնների հիմնարկութիւնը:

Նորագոյն զիւտերը: Շոքեմեքենայ, շոգենաւ, երկաթուղի: Հեռագիր, հեռախօս: Լուցիկ: Գազ: Լուսանկարչութիւն: Երկրագործական կատարելագործութեամբ մեքենաներ: Կարեմեքենայ: Ելեքտրականութեան գործադրութիւնը առօրեայ կեանքում: Բանկեր: Թղթադրամ: Առևարական ընկերութիւններ: Բորսա:

Ընդհանուր տեսութիւն քաղաքակիրթ աշխարհի ներկայ կացութեան: Երկրագնդի ազգաբնակչութիւնը: Քաղաքակիրթ հին և նոր աշխարհներ: Վայրենի ցեղեր: Ազգաբնակչութեան բաժանումը ըստ ցեղերի և ըստ կրօնների: Հանրամարդկային քաղաքակիրթութեան տարածուելը: Պոստ-հեռագրական միութիւն: Սանիտարական միութիւն: Արգիւնաբերութիւն և առևտուր: Ստրկութեան և ճորտութեան վերացում ամեն տեղ: Սահմանազրական կառավարական ձևի յաղթանակը ամեն տեղ: Խաղաղասիրական ճրգառումներ:

## Հայոց պատմութիւն

Սելջուկների արշաւանքը: Տուղրիլ-Բէկ և Ալֆաալան: Արժրունեաց և Բագրատունեաց թագաւորութիւնների անկումը: Հայոց թագաւորների, նախարարների և ժողովրդի գաղթելը: Կաթողիկոսական աթոռի փոխադրութիւնը Կիլիկիա: Ներսէս Շնորհալի (յարաբերութիւն յոյների հետ. եկեղեցու բարեգարգութեան խնդիր, հովուական շրջաբերական):

Վանական կեանքի զարգացումը: Վանքեր. վանական միաբանութիւնների կազմակերպութիւնը և ներքին կեանքը: Վանքերի նշանակութիւնը ժողովրդի համար:

Վրաստանի ուժեղանալը: Իվան Աթաբէկ և Զաքարիա սպասալար: Անին վրացոց ձեռքում: Զալալէղիլիի արշաւանքը և Գառնիի կուլը:

Թաթարներ. Զարմաղան. Գուգարաց աշխարհի աւերումը: Անին և Կարսը թաթարների ձեռքում: Թաթարներ և Ռուբինեաններ: Սելջուկների և թաթարների փոխադարձ յարաբերութիւնները: Թաթարական պետութեան կազմակերպութիւնը:

Ռուբինեան պետութեան ծագումը: Յարաբերութիւնները խաչակիրների հետ: Լեոն Ա.

Թագաւոր: Չարէլ և Հեթում Ա. Հեթումի ճանապարհորդութիւնը մեծ խանի մօտ: Ռուբինեան Թագաւորութեան վերջին տարիները: Յարաբերութիւնները Հոռմի հետ: Ներսէս Համբրոնացի:

Լանկթամուր: Կոտորածներ Հայաստանում: (Ղարադոյուններ և աղղոյուններ: Քրդական պետութիւն: Նոր պարսկական և օսմանեան պետութեանց սկզբնաւորութիւնը): Կաթողիկոսական աթոռի փոխադրութիւնը Էջմիածին:

Մէֆեան տուն. (օսմանցիներ և պարսիկների մաքառումը Հայաստանի համար): — Շահ-Աբաս և հայերի գաղթը Պարսկաստան: Էջմիածնի շինարար կաթողիկոսները: Աստուածաշնչի տպագրութիւնը: Կաթողիկոսութեան մուտքը Հայաստան:

Մխիթար Սեբաստացի և Մխիթարեան միաբանութեան հիմնարկութիւնը: Մխիթարեանների գործունէութեան նշանակութիւնը:

Ղարաբաղի մելիքները. նրանց կողմակերպութիւնը և վերաբերմունքը դէպի ժողովուրդը. յարաբերութիւնը պարսիկների հետ: Մելիքների արտաքին կեանքը (ամբոցները, զգեստները, զէնքերը), և փոխադարձ յարաբերութիւնները: Ղարաբաղի մելիքների յարաբերութիւնները Պետրոս Մեծի հետ: Դաւիթ-բէկ: Օսմանցիք նուաճում են Ղարաբաղը: Ապստամբութիւն օսմանցոց դէմ և պարսից իշխանութեան վերականգնումը:

Երկպառակութիւններ մելիքների մէջ: Շուշին մահմետականների ձեռքում:

Հայերի յարաբերութիւնները Կատարինէ Մեծի հետ: Սիմէոն կաթողիկոս: Աղամահմադ խանի արշաւանքը: Ռուսների մուտքը Անդրկովկաս և Վրաստանի ու Ղարաբաղի միացումը:

Ռուսաց տիրապետութեան արածուեղը Անդրկովկասում: Ռուսների պատերազմները պարսիկների և տաճիկների հետ: Հայերի բռնած դէրքը այդ պատերազմներում: Հայերի գաղթելը Պարսկաստանից և Տաճկաստանից: Հայոց եկեղեցու կազմակերպութիւնը Ռուսաստանում, ըստ Պոլոժենիայի:

Թանգիմաթ: Ազգային Սահմանադրութիւն Թուրքիայում. կենտրոնական և գաւառական կազմակերպութիւններ: Մանակի կաթողիկոսութիւնները և Երուսաղէմի պատրիարքութիւնը:

Ռուս-Տաճկական վերջին պատերազմը: Հայոց ընդհանրական կաթողիկոսները XIX դարում: Կրթական գործի զարգացումը: Բարեգործական հիմնարկութիւնները:

Պարսկահայերը: Համառօտ հայեացք հայոց գաղթականութիւնների վրայ: Լեհաստանի և Հնդկաստանի հայերը: Նորագոյն գաղթականները:

## XVI. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆԵՐ

## 2. ՏԱՐԻ (շաբաթական 1 դաս)

Ռուսաստանի պետական կազմակերպութիւնը, գիւղ, քաղաք, զեմստովօ՝ իր ստորաբաժանուսներով, պետութիւն: Օրէնսդրական, կատարողական (գործադիր) և դատաստանական իշխանութիւններ ու մարմիններ: (Քաղաքացիական և քրէական դատարաններ):

Հայոց եկեղեցու կազմակերպութիւնը: Ծուխ, վիճակ, թեմ, Ռուսահայք՝ համապատասխան ժողովներով, առեաններով և պաշտօնեաներով: Ամենայն Հայոց Կաթողիկոս. նրա ընտրութեան եղանակն և իշխանութիւնը:

Տարրական ծանօթութիւն մասնաւոր իրաւունքի հետ: Քաղաքացիական վիճակ (гражданское состояние). անչափահասների հովանաւորութիւն, սեփականութիւն, ժառանգութիւն: (Սովորական պայմանագրերի ձևեր):

Տնտեսագիտական տարրական ծանօթութիւններ: Մարդ և նրա պահանջները. հասարակութիւնը և նրա տուած օգուսները: Հում նիւթ, կապիտալ, աշխատանք՝ անհատական և հաւաքական ընկերակցութեամբ: Փոխանակում և առևտուր: Խնայողութիւն, խնայողական սրնդուկ. ապահովագրական և փոխադարձ օգնութեան ընկերութիւններ:

## XVII. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

## 2. ՏԱՐԻ (շաբաթական 2 դաս)

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ գիտելիքներ

Օղը: Մաքուր և անմաքուր օդը, անմաքուրութեան աեսանելի և անտեսանելի տարրերը:

Տեսանելի վնասակար տարրերը: Ծուխը (թոնրից, օջախից, մանդալից, քուրսուց): Փոշին՝ հանքային — անօրգանական և օրգանական՝ բուսական ու կենդանական նիւթից առաջացած, սրանց տարրերութիւնները: Իրսից մտած փոշին, դեռինը առանց ջրջկնելու աւելելուց առաջացած փոշին, փոշոտ հագուստեղէնը բնակարանում թափ տալուց, ցեխոտ կօշիկներից առաջացած փոշին:

Անտեսանելի վնասակար տարրերը: Ածխածնի չափազանց մեծ քանակը երկաթէ վառարանից, ինքնաեռից, օրգանական նիւթերի փթելուց, մեծ քանակութեամբ մարդկանց ու կենդանիների

արտաշնչումից փակ աեղերում: Ածխածնոտ օդի փնտսները, նրանով ածխակալածներին (ածխահարներին), այսինքն՝ թունաւորութեանը, օգնելը:

**Միկրոօրներ:** Վարակիչ միկրոօրներից առաջացած հիւանդութիւնները, վարակուածներին առանձնացնելու և կացարանը ախտահանելու անհրաժեշտութիւնը, վէրքերի պահպանութիւնը միկրոօրներից:

**Խոնաւութիւնը՝** խոնաւ բնակարանից (գետնափոր անից և այլ պատճառներից), լուացքը սենեակում կախ տալուց: Խոնաւութեան փնտսները:

**Չուրը:** Մաքուր և անմաքուր շուրը. շուրն իբրև սննդաւորութեան և մաքրութեան միջոց. ջրի տեսակները՝ գետի, աղբիւրի, ջրհորի, լճի, ծովի. սրանց համեմատութիւնը. ի՞նչ տեսակ շուր ենք գործածում և ի՞նչպէս պէտք է գործածենք: Ջրհորների և գետերի ջրերի գործածութեան վտանգը համաճարակի ժամանակ (խոլերա, տիֆ): Համաճարակների ժամանակ եփ տուած շուր գործածելը: Եփ տուած շուրն ինչպէս պահել: Ջրանցքներ ու կոյուղիները:

**Մաքրութիւն:** Մարմնի մաքրութեան անհրաժեշտութիւնն ընդհանրապէս և մասնաւորապէս ականջների, բերանի և առամների, ձեռների և երեսի (լուացուելու կարևորութիւնը հացի նրստելուց առաջ): Կեղտից առաջացած վտանգը. սառն ու տաք ջրով լողանալը. վաննա, հասարա-

կական բաղանիքների կարևորութիւնը: Սպիտակեղէնի մաքրութիւնը (բացատրել շապիկ չփոխելու նախապաշարմունքի փնտսակար հետևանքը). ուրիշի շորերը անլուայ հագնելու փաստը: Եռման շուրն իբրև ախտահանման միջոց: Մապոնի մաքրիչ ազդեցութիւնը. լուացքն ինչպէս անել ու չորացնել:

**Ջերմութիւնը:** Սենեակի ջերմութեան չափը և մարմնի ջերմութիւնը, որ արևնիցն է: Սենեակի և մարմնի ջերմաչափ: Ջերմը հիւանդութեան նշան է: Հիւանդին պառկեցնելու, ուտեցնելու և խմեցնելու եղանակները: Չափազանց տաք հագնուելու փնտսները: Երեխաներին չպէտք է շատ տաք հագցնել:

**Ցուրտը:** Ցուրտը մեր մարմնի զգացողութեան տեսակէտից համեմատական գաղափար է: Ի՞նչ է մրսիլը: Քրտնածը, քրտնածին պահելը: Մրսելուց առաջացած հիւանդութիւնները: Մարմնամասերի սառչիլը և խնամք: Օդին սառեցնում է և ոչ թէ տաքացնում:

**Հոյսը:** Արևի ճառագայթների օգտաւէտութիւնը. անմիջական և անդրադարձ լոյս: Ո՞ր կողմի լուսամուտները համապատասխան են առողջապահական պահանջներին: Աշակերանների դիրքը դէպի լոյսի ուղղութիւնը պարապելու ժամանակ: Աչքը իբրև տեսողութեան գործարան և նրա առողջապահութիւնը: Տես զգայարանքներին վերաբերեալ հատուածը:

*Բնակարանի և դասարանի առողջապահական*

պայմանները: Շէնքը, լուսաւորութիւնը, օգափոխութեան եղանակները: Չոր ու խոնաւ բնակարան: Ննջարանի առողջապահական պայմանները: Գեանին պառկելու վաանգը (խոնաւութիւն, միջառաներ): Կարասիքի և այլ իրեղէնների մաքրութիւնը: Տունն աւելելու և պատերն ու առաստաղը սրբելու եղանակները: Հացատունը, թոնիրը, խոհանոցը, երգիքը և նրա նշանակութիւնը:

Հիւանդի սենեակը, անկողինը: Մի անկողնում երկուսով քնելու փաստը: Երեխայի օրօրոցը. պինդ քարուքելու վաանգը: Օրօրելու փաստը: Մանկական մահճակալը: Լուն, սջիլը, բազլինջը, ճանճը, մոծակը, մլակը. սրանցից ազատուելու միջոցը:

Բակը, պարտէզը, նրանց օգտակարութիւնը:

Հագնելիքի առողջապահական պայմանները: Հագուստեղէնի նիւթերը (բամբակ, բուրդ, վուշ, մետաքս) ըստ տարուան եղանակների. այդ նիւթերի շերմապահութեան զանազան աստիճանները. ֆուֆայկայի յատկութիւնները, նրա օգուան ու փաստը. գուլպայ, ստնաման, կրկնակօշիկ: Երեխայի բարուրն ու հագուստեղէնը, ստների ու գլխի հագնելիքները: Տես նաև ջրին վերաբերեալ հատուածը:

Ուտելիք և խմելիք: Ուտելիքի նիւթերը բնայուծական (քիմիական) տեսակէտով կենդանական, բուսական և հանքային աշխարհներից: Նրանց քիմիական գլխաւոր առնչութիւնները՝ ջուր, սպիտ(бѣлокъ), ածխածին(углеродъ), Գլխաւոր սննդարար նիւթը՝ սպիտը: Նիւթերի մարսողա-

կանութիւնը և սննդարար ոյժը: Մսեղէն, բուսեղէն և խառն կերակուաներ: Կաթը, մօր կաթը և միւս կենդանիներինը մանկան համար: Կաթի եփ տալու անհրաժեշտութիւնը և պահելու կերպը: Կաթից պատրաստուած ուտելիքները՝ պանիր, մածուն, իւղ, թան և ամեն մէկի սննդարար զօրութիւնը: Չուն ու միսը, նրանց տեսակային բաժանմունքը, պահելու և գործ ածելու կերպերը, մսաջուր (բուլիոն) պատրաստելը: Կերակուր պատրաստելը: Բանջարները և նրանց սննդարար զօրութիւնը. բանջարեղէնի պատրաստելը: Աշխատանք և սնունդ: Ուտելու ժամերը, շափը: Աշակերտի աշխատանքը, սնունդը, հանգիստը: Փորկապութիւն և փորլուծութիւն (հասակաւորների և մանուկների): Սմելիքը: Սպիրտից առաջացած փաստները (արբեցողութիւն):

## Բ. Յատկապէս կարեւորագոյն օրգանների առողջապահութիւնը

Նիւթափոխութեան, այսինքն՝ սննդառութեան և շնչառութեան գործարանների առողջապահութիւնը, վերոյիշեալ այս կամ այն գործօնների ազդեցութիւնն այս օրգանների վրայ, ինչպէս նաև մաշկի առողջապահութիւնը նիւթափոխութեան տեսակէտից:

Ուղեղի և ընդհանրապէս ջղային ու մկանային սիստէմների առողջապահութիւնը: Աշխա-

տութիւն, ուժասպառութիւն, հանգիստ, մարմնա-  
մարզութիւն և քուն:

Ձգայարանքների առողջապահութիւնը: Վե-  
րոյիշեալ այս կամ այն գործօնների ազդեցու-  
թիւնը նրանց վրա:

### XVIII. ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

#### I. Ազատ վարժութիւններ.

Կանգնելը և կանգնած տեղը ազատ վար-  
ժութիւններ բազուկների, գլխի, սրունքների:  
Քայլընթացք զանազան կերպերով. Ոստնել-  
ցատկելը. Վազելը. Մարմինը իւր առանցքի  
շուրջը պտտեցնելը:

#### II. Շարժով վարժութիւններ.

Պարզ շարք. Բարդ շարք. Ազատ և շարքով  
վարժութեանց միութիւնից առաջացած շրջա-  
պարեր, միջանցուկ բազմապիսի քայլընթացքներ:

#### III. Գործիքներով վարժութիւններ

##### ա. Ձեռքի գործիքներով.

Յուպերով, ծանրոցներով և ձողերով վար-  
ժութիւններ:

Գնդակներ, քարեր, կոճղներ և այլն նետե-  
լու վարժութիւններ.

Ձեռքերում բռնած կարճ թռիկի վրայով  
թռչկոտելու վարժութիւններ.

Բռնելու, բարձրացնելու, տանելու, քաշելու  
և հրելու վարժութիւններ.

#### բ. Սառփի վարժութիւններ.

Մի ծայրը ամրացրած, միւս ձեռքով պտտա-  
ցրած թռիկի վրայից, տակից ցատկելը:

Հորիզոնական դիրքով թռիկի վրայից ցատկելը:

Արկղի վրայ և վրայով ցատկելը.

Ձիակի վրայ և վրայով ցատկելը:

Վարժութիւններ զուգահեռական ձողերի  
վրայ.

Վարժութիւններ հաստատուն հորիզոնական  
ձողի վրայ.

Վարժութիւններ հորիզոնական, թեք և ուղ-  
ղահայեաց սանդուղների վրայ:

Վարժութիւններ հանգուցաւոր և անհան-  
գոյց թռիկի վրայ:

Վարժութիւններ ուղղահայեաց ձողի վրայ.

Վարժութիւններ կախովի ճօճացող օղակ-  
ների միջոցով.

Վարժութիւններ ճօճացող ձողի միջոցով:

#### IV. Մարմնամարզական խաղեր.

Մուկ ու կատու: Հաս — հաս: Երկու և երեք:  
Գերի: Շրջան: Թագաւոր, և այլն:

Հայոց եկեղեցական դպրոցների սարրական դասընթացի դասերի ընդհանուր աղիւսակ:

Ա. ու ա ռ կ ա ն ե Ր Ը	Ուսման տարիներ						Ընդ գրում	
	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Չ.		
Պրօն	2	2	2	2	2	2	12	3
Հայոց լեզու	6	6	5	5	5	4	31	8
Ռուսաց լեզու		6	5	5	5	4	25	14
Վայելչազրուիլին		1	1	1			3	
Թուարանութիւն	5	5	4	3	3	3	23	17
Նկարչութիւն	2	2	1	2	1	1	9	21
Երգեցողութիւն	2	2	2	2	2	1	11	25
Արհեստներ	2	2	2	2	2	2	12	28
Իրագննութիւն	2	2					4	32
Հայրենագիտութիւն			4	4			8	34
Բնական գիտութիւններ			3	3	3	3	12	41
Երկրաչափական ձևագիտութիւն			1	1	1	1	4	51
Աշխարհագրութիւն Ռուսաստանի						1	1	53
» ընդհանուր						1	2	55
Պատմութիւն Ռուսաց						1	1	58
» ընդհանուր և Հայոց						3	3	61
Քաղաքացիական ուսմունք							1	74
Առողջապահութիւն							2	75
Ընդամենը	21	28	30	30	30	30	169	

Մարմնամարզութիւն

Մարմնամարզարան ունեցող դպրոցներում իւրաքանչիւր դասարանում շաբաթական 2 ժամ, իսկ ունեցողներում՝ օրական 25 րոպէ:

Համարի հերթագրու ամիսային  
համարի հերթագրու ամիսային

Մասնակցի համարը	Մասնակցի համարը											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3
4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4
5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5
6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6
7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7
8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8
9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9
10	10	10	10	10	10	10	10	10	10	10	10	10
11	11	11	11	11	11	11	11	11	11	11	11	11
12	12	12	12	12	12	12	12	12	12	12	12	12
13	13	13	13	13	13	13	13	13	13	13	13	13
14	14	14	14	14	14	14	14	14	14	14	14	14
15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15	15
16	16	16	16	16	16	16	16	16	16	16	16	16
17	17	17	17	17	17	17	17	17	17	17	17	17
18	18	18	18	18	18	18	18	18	18	18	18	18
19	19	19	19	19	19	19	19	19	19	19	19	19
20	20	20	20	20	20	20	20	20	20	20	20	20
21	21	21	21	21	21	21	21	21	21	21	21	21
22	22	22	22	22	22	22	22	22	22	22	22	22
23	23	23	23	23	23	23	23	23	23	23	23	23
24	24	24	24	24	24	24	24	24	24	24	24	24
25	25	25	25	25	25	25	25	25	25	25	25	25
26	26	26	26	26	26	26	26	26	26	26	26	26
27	27	27	27	27	27	27	27	27	27	27	27	27
28	28	28	28	28	28	28	28	28	28	28	28	28
29	29	29	29	29	29	29	29	29	29	29	29	29
30	30	30	30	30	30	30	30	30	30	30	30	30
31	31	31	31	31	31	31	31	31	31	31	31	31
32	32	32	32	32	32	32	32	32	32	32	32	32
33	33	33	33	33	33	33	33	33	33	33	33	33
34	34	34	34	34	34	34	34	34	34	34	34	34
35	35	35	35	35	35	35	35	35	35	35	35	35
36	36	36	36	36	36	36	36	36	36	36	36	36
37	37	37	37	37	37	37	37	37	37	37	37	37
38	38	38	38	38	38	38	38	38	38	38	38	38
39	39	39	39	39	39	39	39	39	39	39	39	39
40	40	40	40	40	40	40	40	40	40	40	40	40
41	41	41	41	41	41	41	41	41	41	41	41	41
42	42	42	42	42	42	42	42	42	42	42	42	42
43	43	43	43	43	43	43	43	43	43	43	43	43
44	44	44	44	44	44	44	44	44	44	44	44	44
45	45	45	45	45	45	45	45	45	45	45	45	45
46	46	46	46	46	46	46	46	46	46	46	46	46
47	47	47	47	47	47	47	47	47	47	47	47	47
48	48	48	48	48	48	48	48	48	48	48	48	48
49	49	49	49	49	49	49	49	49	49	49	49	49
50	50	50	50	50	50	50	50	50	50	50	50	50

Համարի հերթագրու ամիսային  
համարի հերթագրու ամիսային

<< Ազգային գրադարան



NL0228726

50. 435